



**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ  
ՏԵՂԵԿԱԳԻՐ**

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ N 08(159) «20» օգոստոսի 2018թ.**

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԼՂՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ</b>		
54	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 28-ի N15-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի N 8-Ն որոշումը.....	3
<b>ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԼՂՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ</b>		
55	««Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող բնափայտի մթերման ծառայությունների գները հաստատելու մասին» ԱՀ բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարի N 52-Ն հրամանը.....	5
56	«Արցախի Հանրապետության տարածքում որսի կենդանիների 2018-2019 թվականների սիրողական որսի համար թույլատրելի չափաքանակները և որսի ժամկետները սահմանելու մասին» ԱՀ բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարի N 70-Ն հրամանը.....	7
57	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի 2015 թվականի հուլիսի 23-ի N 112-Ն հրամանի մեջ լրացում կատարելու մասին» ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 9-Ն հրամանը.....	9
58	«Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2018-2019 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի N 225-Ն հրամանը.....	10
59	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության 2008 թվականի մարտի 27-ի թիվ 42	

	հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ֆինանսների նախարարի N 190-Ն հրամանը.....	34
60	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության 2008 թվականի մայիսի 21-ի թիվ 74 հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ֆինանսների նախարարի N 191-Ն հրամանը.....	40
61	«Ոստիկանության ծառայողին համազգեստ տրամադրելու, այն կրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» ԱՀ ոստիկանության պետի N 1-Ն հրամանը.....	51
<b>ՀԱՏՈՒԿ ԲԱԺԻՆ</b>		
	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից լիցենզիա տրամադրելու և տրված լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու մասին որոշումների պատճենները.....	64
	ԱՀ առողջապահության նախարարի կողմից լիցենզիաներ տրամադրելու և տրված լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանների պատճենները.....	72
	ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության կողմից հուլիս ամսում տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ...	77
	ԱՀ քաղաքաշինության նախարարության կողմից հունիս և հուլիս ամիսներին տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ.....	79
	ԱՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ.....	85

Գրանցված է  
Արցախի Հանրապետության  
արդարադատության նախարարության  
կողմից 2018 թվականի օգոստոսի 20-ին  
Պետական գրանցման համարը 3001855

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

16 օգոստոսի 2018թ.

N 8-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 28-Ի N15-Ն ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրատարածքներ կազմավորելու և ընտրատարածքները համարակալելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 22-ի N 74/257-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 15-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման հավելվածում թիվ 2 ընտրատարածքի նկարագիրը շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Ս.ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ**

**ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔ ԹԻՎ 2**

Ընդգրկում է Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի հետևյալ հասցեները.

**Ազատամարտիկների փողոցի** թիվ 29, 31, 33, 37, 37ա, 41, 43 բնակելի շենքերը

**Տիգրան Մեծի փողոցի** թիվ 1, 6ա, 10, 13, 18 բնակելի շենքերը

**Աբովյան փողոցի** թիվ 2ա բնակելի շենքը

**Մխիթար Գոշի փողոցի** թիվ 3, 4, 6, 7ա, 8, 10, 10ա, 14 բնակելի շենքերը

**Վ. Մարոյան փողոցի** թիվ 5, 29ա, 31, 33, 34, 35, 37, 39, 41, 43 բնակելի շենքերը,

**Վ. Մարոյան փողոցի** բնակելի տները

**Ա. Հեքիմյան փողոցի** բնակելի շենքերը, **Ա. Հեքիմյան փողոցի** թիվ 8ա/44 և 10/57 բնակելի տները

**Ադմ. Իսակովի փողոցի** բնակելի շենքերը

**Մեսրոպ Մաշտոցի փողոցի** թիվ 2, 4, 4ա, 4բ, 4գ, 4վ, 6, 8 բնակելի շենքերը

**Գեներալ Իվանյան փողոցի, Գեներալ Իվանյան 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ նրբանցքների, Գեներալ Իվանյան փակուղու** բնակելի տները

**Սարգիս Աբրահամյան փողոցի և Սարգիս Աբրահամյան նրբանցքի** բնակելի տները

**Ալեքսանդր Թամանյան փողոցի և Ալեքսանդր Թամանյան փակուղու** բնակելի տները

**Թորգոմի փողոցի** բնակելի տները

**Կոյա Դանիելյան փողոցի** բնակելի տները

**Շինարարների փողոցի, Շինարարների 1-ին և 2-րդ փակուղիների, Շինարարների նրբանցքի** բնակելի տները

**Եղիշե Չարենցի փողոցի, Եղիշե Չարենցի 1-ին և 2-րդ փակուղիների** բնակելի տները

**Գեներալ Սարգսյան փողոցի** բնակելի տները

**Վահան Տերյան փողոցի** բնակելի տները

**Վազգեն Օվյան փողոցի** բնակելի տները

**Օրբելի Եղբայրներ փողոցի** բնակելի տները

**ԼԵՈՆԱՑԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ**

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ**

**ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Ս.ՄԵԼՔՈՒՍՅԱՆ**

Գրանցված է  
Արցախի Հանրապետության  
արդարադատության նախարարության  
կողմից 2018 թվականի հուլիսի 11-ին  
Պետական գրանցման համարը 1131847

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

25 հունիսի 2018 թվական

N 52-Ն

ք.Ստեփանակերտ

**«ԱՐՑԱԽԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲՆԱՓԱՅՏԻ ՄԹԵՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարու-  
թյան 2013 թվականի ապրիլի 25-ի N 228-Ն որոշման 1-ին կետի 1-ին  
ենթակետը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավա-  
րության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 712 որոշման 5-րդ կետը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝**

1. Հաստատել «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակեր-  
պության կողմից մատուցվող բնափայտի մթերման ծառայությունների գները՝  
համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման  
օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ հաստատված առավելագույն գներն  
ուժի մեջ են մտնում սույն հրամանի պաշտոնական հրապարակման օրվանից  
մեկ ամիս հետո:

**Վ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

Համաձայնեցված է՝  
Արցախի Հանրապետության  
Ֆինանսների նախարար  
**ստորագրություն** Ա. Հարությունյան  
«29» հունիսի 2018 թվական

Հավելված  
Արցախի Հանրապետության  
բնապահայանության  
և բնական ռեսուրսների  
նախարարի 2018 թվականի  
հունիսի 25-ի N 52-Ն հրամանի

**ԳՆԵՐ**

**«ԱՐՑԱԽԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲՆԱՓՈՅՑԻ ՄԹԵՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ՀՀ դրամ**

Հ/Հ	Ծառայության անվանումը	Չափման միա- վորը (խտաց- ված խորա- նարդ մետր)	Խոշոր տրա- մագիծը 25սմ և ավելի	Միջին տրա- մագիծը 13սմ-25սմ	Փոքր տրա- մագիծը մինչև 13սմ
1.	Գործափայտի մթերում (ծառերի անտառից դուրս բերում և բարձում)				
1)	հաճարենի		33 000	30 000	27 000
2)	կաղնի, հացենի, լոբենի		45 000	41 000	37 000
2.	Վառելափայտի մթերում (ծառերի անտառից դուրս բերում և բարձում)				
1)	տեղական			10 145	
2)	արտահանում			14 435	

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Է. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Գրանցված է  
Արցախի Հանրապետության  
արդարադատության նախարարության  
կողմից 2018 թվականի օգոստոսի 15-ին  
Պետական գրանցման համարը 1131854

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

06 օգոստոսի 2018 թվական

N 70-Ն

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈՐՄԻ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ  
2018-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՈՐՄԻ ՀԱՄԱՐ  
ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՐՄԻ  
ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Լեռնա-  
յին Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 8-րդ կետի՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Սահմանել Արցախի Հանրապետության տարածքում որսի կենդանիների 2018-2019 թվականների սիրողական որսի համար թույլատրելի չափաքանակները և որսի ժամկետները՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության պետին՝ կենդանական աշխարհի օգտագործման մասին պայմանագրերի կնքման գործընթացը կազմակերպելիս առաջնորդվել սույն հրամանի հավելվածում նշված չափաքանակներով:

3. 2018-2019 թվականների որսաշրջանի ընթացքում սույն հրամանի հավելվածում նշված կենդանիների որսի համար թույլտվություն ունեցող անձանց չի արգելվում իրականացնել գայլի և շնագայլի որս:

**Ֆ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

Հավելված  
Արցախի Հանրապետության բնապահպանության  
և բնական ռեսուրսների նախարարի  
2018 թվականի օգոստոսի 6-ի N 70-Ն հրամանի

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈՐՄԻ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻ  
2018-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՈՐՄԻ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ  
ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՐՄԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

1. Աղավիններ (թխակապույտ և անտառային, սովորական տատրակ) - մինչև 3000 հատ, 2018 թվականի օգոստոսի 25-ից մինչև 2019 թվականի փետրվարի 24-ը (տասը հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ):
  
2. Լոր - մինչև 2000 հատ, 2018 թվականի օգոստոսի 25-ից մինչև հոկտեմբերի 13-ը (տասը հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ):
  
3. Ջրլող թռչուններ՝ բադեր (կոնչան բադ, կարմրագլուխ սուզաբադ, սուլող և ճքճքան մրտիմներ) և ջրհովիվիկներ (փառփառ, եղեգնահավ) - մինչև 1000 հատ, 2018 թվականի հոկտեմբերի 13-ից մինչև 2019 թվականի փետրվարի 24-ը (հինգ հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ):

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Է. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**



Գրանցված է  
Արցախի Հանրապետության  
արդարադատության նախարարության  
կողմից 2018 թվականի հուլիսի 25-ին  
Պետական գրանցման համարը 1121851

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

18 հուլիսի 2018 թվական

N 9-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի  
N 112-Ն ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը

**Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ`**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի 2015 թվականի հուլիսի 23-ի «Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանից և կադաստրային գործից անշարժ գույքի միավորի վերաբերյալ տեղեկությունների միասնական քաղվածքի (միասնական տեղեկանք) ձևը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2012 թվականի մայիսի 23-ի N 144-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 112-Ն հրամանով հաստատված հավելվածում «Միասնական տեղեկանքը ուժի մեջ է 15» բառերից հետո լրացնել «աշխատանքային» բառը:

2. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ա. Թովմասյանին՝ սույն հրամանն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական գրանցման:

**Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Գրանցված է  
Արցախի Հանրապետության  
արդարադատության նախարարության  
կողմից 2018 թվականի հուլիսի 26-ին  
Պետական գրանցման համարը 1051852

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«26» հուլիսի 2018թ.

N 225-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ  
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018-2019  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի  
14-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.**

1. Հաստատել հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2018-2019 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսական բաժնին՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումն իրականացնել՝ հիմք ընդունելով սույն հրամանով հաստատված օրինակելի ուսումնական պլանները:

3. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչությանը և կրթության պետական տեսչությանը՝ ապահովել ուսումնական հաստատությունների գործունեությունը՝ օրինակելի ուսումնական պլանների պահանջներին համապատասխան:

4. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի տեղակալ Ս. Համբարձումյանին:

**Ն. ԱՂԱԲԱԼՅԱՆ**

**ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ**

**I. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ**

Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ Հաստատություն) 2018-2019 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները (այսուհետ՝ Ուսումնական պլան), բացառությամբ 7-րդ և 8-րդ աղյուսակների, ունեն երկու՝ պետական և դպրոցական բաղադրիչ: Պետական և դպրոցական բաղադրիչները պարտադիր են և պետական ուսումնական հաստատություններում ֆինանսավորվում են պետական բյուջեից: Հաստատությունը Ուսումնական պլանի հիման վրա դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ հաստատում է տվյալ ուսումնական տարվա իր ուսումնական պլան(ներ)ը:

1. Հաստատության Ուսումնական պլանը սահմանում է միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների, և հանրակրթական պետական ծրագրի նորմատիվային ծավալը (սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն չափը)՝ ըստ դասարանների:

2. Պետական բաղադրիչով սահմանված ժամաքանակում փոփոխություն կարող է կատարվել միայն Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) համաձայնությամբ՝

1) արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողների ուսուցումն առավել բարենպաստ պայմաններում կազմակերպելու համար:

2) բազմաժամանակյա կամ թերբեռնված դասարանների առկայության դեպքում:

3) Նախարարության կողմից երաշխավորված այլընտրանքային ծրագրերով ու մեթոդներով ուսուցում իրականացնելու դեպքում:

3. Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի տնօրինման կարգը սահմանված է՝

1) «Հաստատության ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումներ»-ում:

2) օտար լեզվի ընտրությունը՝ «Օտար լեզվի ընտրության կարգ»-ում:

4. Ուսումնական պարապմունքները Հաստատությունում սկսվում են 2018թ. սեպտեմբերի 1-ին, ավարտվում 2019թ. մայիսի 24-ին՝ 5-օրյա աշխատանքային շաբաթվա և մայիսի 25-ին՝ 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին, 32՝ երկրորդ և 34՝ երրորդից տասներկուերորդ դասարանների համար:

5. Ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպվում է ուսումնական պլանների հիման վրա՝ յուրաքանչյուր սովորողի համար կազմելով անհատական ուսուցման պլան (ԱՌԲՊ):

6. Ուսումնական պլանի պետական պարտադիր և դպրոցական բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշով, առարկայական չափ-

րոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման ապահովմանը:

7. Հաստատությունում (2-12-րդ դասարաններ) գործում է սովորողների գնահատման 10 միավորային սանդղակ:

8. Գիտելիքների ստուգումների, հիմնական և միջնակարգ կրթության ավարտական և պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման այլ սանդղակները բերվում են գնահատման 10 կամ 20 միավորային գրանցման:

9. Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների (գնահատականի) հիման վրա՝ տարեկան գնահատականները՝ բացառությամբ սույն հավելվածի 10-րդ կետով նախատեսված դեպքի:

10. Առաջին դասարանում սովորողներին ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում. ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի կրթական զարգացման բնութագիրը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 4-ի N 846-Ն հրամանով հաստատված կարգի:

11. Հաստատությունում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է: Դասի (մեկ ակադեմիական դասաժամի) տևողությունը 45 րոպե է:

12. Տարրական դպրոցում յուրաքանչյուր դասաժամի միջնամասում որոշակի ժամանակ հատկացվում է լիցքաթափող և վերականգնող վարժություններին ու խաղերին՝ Նախարարության մեթոդական ցուցումների համաձայն:

13. Ուսումնական պարապմունքների ընթացքում 3-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2018 թվականի հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 4-ը ներառյալ, ձմեռային՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ից 2019 թվականի հունվարի 6-ը ներառյալ, գարնանային՝ 2019 թվականի մարտի 25-31-ը ներառյալ:

14. Առաջին դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2018 թվականի հոկտեմբերի 22-ից նոյեմբերի 4-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ից 2019 թվականի հունվարի 20-ը ներառյալ, գարնանայինը՝ 2019 թվականի մարտի 18-31-ը ներառյալ:

15. Երկրորդ դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2018 թվականի հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 4-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ից 2019 թվականի հունվարի 20-ը ներառյալ և գարնանայինը՝ 2019 թվականի մարտի 25-31-ը ներառյալ:

16. Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) (այսուհետ՝ Լիազոր մարմին) ենթակայության հաստատությունների համար սույն հավելվածի 13-րդ, 14-րդ և 15-րդ կետերով սահմանված արձակուրդների ժամկետներում Հաստատության նախաձեռնության դեպքում Լիազոր մարմնի կողմից կարող են կատարվել փոփոխություններ: Լիազոր մարմինը փոփոխությունները առնվազն հինգ աշխատանքային օր առաջ համաձայնեցնում է Նախարարության հետ:

17. Նախարարությունը անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետներ և այլն) կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ բաց թողնված ժամերը մինչև ուսումնական պարապմունքների ավարտը՝ լրացնելու և ըստ Հաստատության ենթակայության՝ Լիազոր մարմնին տեղեկացնելու պայմանով: Անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում Հաստատության դիմումի հիման վրա Լիազոր մարմինը կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ այդ մասին հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնելով Նախարարությանը:

Նախարարության ենթակայության հաստատություններում սույն հավելվածի 13-րդ, 14-րդ և 15-րդ կետերով սահմանված արձակուրդների ժամկետների փոփոխությունները, ինչպես նաև Հաստատության կողմից լրացուցիչ արձակուրդի նախատեսումը կատարվում է Հաստատության նախաձեռնությամբ, Նախարարության համաձայնությամբ:

18. Ոչ պետական ուսումնական հաստատությունում արձակուրդների տևողությունը և ժամկետները, ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունները սահմանում է հիմնադիրը՝ այդ մասին հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահելով Նախարարությանը:

## **II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ**

19. Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգ.

1) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է Ուսումնական պլանի պետական բաղադրիչով տվյալ դասարանի պետական պարտադիր առարկայացանկում նախատեսված և (կամ) Նախարարության կողմից երաշխավորված լրացուցիչ առարկայացանկում ընդգրկված առարկաներին, հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցման ծրագրերի իրականացմանը և (կամ) սովորողների նախասիրություններին, Հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով.

2) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը պետական պարտադիր առարկաներին բաշխելու դեպքում ուսուցումն իրականացվում է սույն Ուսումնական պլանի միջնակարգ դպրոցի ինչպես նաև ավագ դպրոցի հոսքերի ուսումնական պլանների ընդհանուր հանրակրթական առարկաների համար նախատեսված ծրագրերով.

3) Նախարարության կողմից հաստատված ծրագրերով երաշխավորվում է «Կիրառական տնտեսագիտություն» (9-րդ դասարան), «Տնտեսագիտություն» (10-11-րդ դասարաններ), «Կյանքի հմտություններ» (2-8-րդ դասարաններ), «Բնապահպանություն» (7-8-րդ կամ 8-9-րդ դասարաններ), «Էկոլոգիա» (8-9-րդ դասարաններ), «Էներգիայի և ռեսուրսների օգտագործում» (7-րդ կամ 8-րդ դասարան), «Ֆերմերային գործ» (11-12-րդ դասարաններ), «Տրամաբանություն» (11-րդ դասարան), «Գրաբար» (7-րդ կամ 8-րդ և 11-րդ դասարաններ), «Հայոց եկեղեցու պատմություն» (2-4-րդ դասարաններ), «Հայկական հարցի պատմություն» (11-րդ դասարան), «Հոգեբանություն» (7-8-րդ դասարաններ), «Մշակույթի պատմություն» (7-9-րդ դասարաններ) առարկաների ուսուցումը: Նշված առարկաների ուսուցումը այլ դասարաններում Հաստատության կողմից կարող է իրականացվել դրանց առարկայական ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո.

4) Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո.

5) Հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարվում է մանկավարժական խորհրդի որոշմամբ ելնելով Հաստատության, դասարանի պատրաստվածությունից, մանկավարժներով, ծրագրերով, դասագրքերով և երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի որևէ առարկայի լիարժեք ուսուցման կազմակերպման նպատակով Նախարարության կողմից հանրակրթական ուսումնական հաստատությունների համար երաշխավորված այլ ուսումնական գրականությամբ ապահովվածությունից և ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ այլ պայմաններից, ինչպես նաև Նախարարության հանձնարարականներից.

6) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը պարտադիր է.

7) Դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի շրջանակում դասավանդվող առարկայացանկը ամրագրվում է Հաստատության ուսումնական պլանում և դասացուցակում:

20. **Ուսումնական գործընթացի կազմակերպումը 12-րդ դասարանում.**

1) 12-րդ դասարանի առաջին կիսամյակում ուսումնասիրվող հանրակրթական պետական ծրագրի Ուսումնական պլանի նորմատիվային ծավալը սահմանվում է շաբաթական 34 դասաժամ՝ ապահովելով 12-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաների ուսումնասիրությունը:

2) Հաստատության 12-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված առարկաների ուսումնասիրությունն ավարտվում է 12-րդ դասարանի առաջին կիսամյակի վերջում՝ կիսամյակային (տարեկան) գնահատականով և (կամ) ամփոփիչ ատեստավորմամբ (պետական ավարտական քննությամբ), բացառությամբ «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆՁՊ) և սովորողի կողմից երկրորդ կիսամյակում ուսումնասիրության համար ընտրված առարկաների:

3) 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում սովորողի շաբաթական ուսումնական բեռնվածությունը ձևավորվում է պարտադիր ուսումնասիրության «Նախնական զինվորական 7 պատրաստություն» (ՆՁՊ) (1 ժամ) առարկայի և սովորողի ընտրությամբ առնվազն երեք առարկայի ուսումնառության համար հատկացված ժամաքանակից՝ ապահովելով առնվազն 31 դասաժամ:

4) Նորմատիվային 34 դասաժամի և սովորողի ուսումնական պարտադիր բեռնվածության 31 դասաժամի տարբերությունից մնացած 3 դասաժամը տնօրինում է սովորողը:

5) 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում սովորողի կողմից ընտրված առարկաներին Հաստատության ուսումնական պլանով հատկացված ժամաքանակը տրվում է այդ առարկաների ուսումնական նյութի կրկնությամբ:

6) «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆՁՊ) և սովորողի կողմից ընտրված առարկաների ուսումնասիրությունը (կրկնությունը) ավարտվում է 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակի վերջում՝ կիսամյակային (տարեկան) գնահատականով և (կամ) պետական ավարտական քննությամբ:

7) 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում ուսումնասիրության համար իրենց կողմից ընտրված ուսումնական առարկաների ցանկը Հաստատության սովորողները ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակում, մինչև դեկտեմբերի 1-ը գրավոր հայտնում են Հաստատության տնօրենին: Միասնական քննություններ հանձնող սովորողները ցանկում ներառում են նաև միասնական քննական առարկաները:

8) Եթե Հաստատության ուսումնական պլանով նախատեսված որևէ առարկա(ներ) դասարանի սովորողներից ոչ մեկը չի ընտրել, ապա այդ առարկային(ներին) ուսումնական պլանով հատկացված ժամաքանակը վերաբաշխվում է տվյալ դասարանի սովորողների կողմից ընտրված ուսումնական առարկաներին, և կազմվում է տվյալ դասարանի 2-րդ կիսամյակի ուսումնական պլանը:

9) Դասարանի ուսումնական պլանին համապատասխան՝ կազմվում է տվյալ դասարանի դասացուցակը:

10) Մեկից ավելի դասարանների առկայության դեպքում կարող են ձևավորվել միևնույն առարկան ուսումնասիրող զուգահեռ դասարանների սովորողներից կազմված ուսումնական խմբեր: Այդ դեպքում տվյալ ուսումնական առարկայից անհրաժեշտ գրանցումները կատարվում են առարկայական դասամատյանում: Կիսամյակային և տարեկան գնահատականներն այնուհետև փոխանցվում են դասարանի հիմնական դասամատյան:

11) 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում սովորողի կողմից ընտրված առարկաների ուսումնական նյութի կրկնությունը սույն կետի 5-րդ ենթակետի պահանջներին համապատասխան կազմակերպվում է դասարանային (դասացուցակին համապատասխան) և արտադասարանային ինքնուրույն ուսումնական գործունեության տեսակներով:

12) Սովորողը մասնակցում է միայն իր ընտրած առարկաների դասարանային ուսումնական պարապմունքներին:

13) Սովորողը մասնակցում է արտադասարանային ուսումնական պարապմունքներին այն դեպքում, երբ դասացուցակով նրա շաբաթական բեռնվածությունը պակաս է 31 դասաժամից:

14) Սովորողի արտադասարանային պարապմունքներին մասնակցության տևողությունը որոշվում է 31 ժամի և սովորողի դասացուցակային բեռնվածության տարբերությամբ:

15) Արտադասարանային պարապմունքներին սովորողի(ների) մասնակցությունը հաշվառվում է և գրանցվում համապատասխան մատյանում:

16) Արտադասարանային ինքնուրույն ուսումնական գործունեության տեսակներ են՝ ուսուցիչների կողմից տրված հանձնարարությունների կատարումը, լրացուցիչ ուսումնական գրականության և այլ աղբյուրների ուսումնասիրումը, գործնական և փորձնական աշխատանքների կատարումը, հիմնահարցերի հետազոտումը, ստեղծագործական աշխատանքը, տեխնիկական սարքերով և գործիքներով աշխատանքների կատարումը, գրավոր աշխատանքները, նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրերի կիրառումը, անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարումը, ուսումնական էքսկուրսիաների անցկացումը և այլն:

17) Սովորողն իր տնօրինմանը հատկացված 3 ժամը կարող է օգտագործել կրթական այլ ծառայություններ ստանալու նպատակով՝ տվյալ Հաստատությունում կամ այլ հաստատություններում:

#### **21. Օտար լեզվի ընտրության կարգ.**

1) Հաստատություններում դասավանդվում է երկու օտար լեզու, որոնցից մեկը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներից որևէ մեկը.

2) Հաստատության ընտրությամբ երրորդ օտար լեզու (բացի ռուսերենից և մյուս օտար լեզվից) կարելի է դասավանդել դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին՝ 5-9-րդ դասարաններում (շաբաթական 2 ժամ) և 11-12-րդ դասարաններում (շաբաթական 2 ժամ)՝ Նախարարության կողմից հաստատված չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում: 5-րդ դասարանում 3-րդ, 4-րդ և 6-րդ դասարանում 5-րդ, 6-րդ դասարանների ծրագրերը լրիվությամբ ուսուցանելու համար լրացուցիչ հատկացվում են մեկական ժամ՝ խմբակային պարապմունքների համար նախատեսված ժամերից. 10-րդ դասարանում հատկացվում է շաբաթական 2 ժամ՝ խմբակային պարապմունքների համար նախատեսված ժամերից.

3) Նախարարության կողմից՝ Հաստատության մանկավարժական խորհրդի և ըստ Հաստատության ենթակայության լիազոր մարմնի առաջարկությունների հիման վրա, կարող է փոխարինվել Հաստատությունում դասավանդվող երկրորդ օտար լեզուն (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլն) այլ օտար լեզվով, ինչպես նաև որոշվել նոր հիմնադրված Հաստատությունում դասավանդվող երկրորդ օտար լեզուն:

### **III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ**

22. Հանրակրթական դպրոցի դասարանը կազմավորվում է տվյալ դասարան փոխադրված և ընդունված սովորողների ընդհանուր թվի միջին թվաքանականի հաշվարկով: Տարրական և միջին դպրոցների դասարաններում սովորողների թիվը սահմանվում է 25-30, իսկ ավագ դպրոցում՝ 20-25 սովորող: Դասարանում սովորողների առավելագույն թիվը տարրական և միջին դպրոցում չի կարող գերազանցել 35-ը, ավագ դպրոցում՝ 30-ը: Հիմնադրի կողմից սահմանված խտությունից ավելի պակաս խտությամբ



դասարան կարող է բացվել Հաստատության ֆինանսական միջոցների առկայության դեպքում՝ Հաստատության խորհրդի որոշմամբ:

23. Տարրական դպրոցում «Ռուսաց լեզու» և «Օտար լեզու», միջին դպրոցում և ավագ դասարաններում «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» և «Ինֆորմատիկա» (համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների պարապմունքներին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե սովորողների թիվը 30 (20) և ավելի է:

24. Դասարանը նույն կարգով կարող է կիսվել երկու խմբի նաև Նախարարության երաշխավորած «Գրաբար» (7-րդ կամ 8-րդ, 11-րդ դասարաններ) առարկայի պարապմունքների ժամանակ՝ դպրոցական բաղադրիչի ժամաքանակը այդ առարկային տրամադրելու դեպքում:

25. «Տեխնոլոգիա» առարկայի (5-7-րդ դասարաններ) պարապմունքներին դասարանը կիսվում է երկու խմբի՝ տղաների և աղջիկների, եթե տվյալ դասարանի ընդհանուր աշակերտների թիվը 12 (անկախ սովորողների թվից) և ավելի է (ուսուցումը կազմակերպվում է յուրաքանչյուր խմբի համար հաստատված համապատասխան առարկայական ծրագրով):

26. Անհրաժեշտության դեպքում Հաստատությունն իրավասու է վերաբաշխելու առարկաների ուսուցմանը Ուսումնական պլանով հատկացված ժամերը՝ պահպանելով տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակը:

27. 8-11-րդ դասարաններում Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութերի հիման վրա դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ:

1) «Առողջ ապրելակերպ» դասընթացին տրամադրված ժամաքանակը ձևավորվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի տարեկան ժամաքանակից առանձնացված 14 դասաժամի հաշվին:

2) «Ֆիզկուլտուրա» առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը ենթարկվում են թեմատիկ վերաբաշխման՝ պահպանելով տվյալ դասարանի համար Նախարարության հաստատած ծրագրային ամբողջ ծավալը:

3) «Առողջ ապրելակերպ» դասընթացը դասավանդվում է 2019 թվականի հունվար-փետրվար ամիսներին:

4) «Առողջ ապրելակերպ» դասընթացի ընթացիկ գնահատում չի կատարվում: Դասամատյանում դասընթացի գրանցումները կատարվում են առանձին էջում:

28. 6-12-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Ինֆորմատիկա», «Քիմիա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն», «Հայոց պատմություն» և այլ առարկաների ծրագրերով ամսական առնվազն 1 (մեկ) ժամ ուսուցումը կազմակերպվում է համակարգչային կաբինետում (դրա առկայության դեպքում)՝ էլնելով յուրաքանչյուր առարկայից մատուցվող ուսումնական նյութի բովանդակային և դասավանդման մեթոդական պահանջներից: Այն առավել արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է օգտագործել ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի կայքում (<http://www.aniedu.am/>), Կրթության ազգային ինստիտուտի կրթական ալիքից (<https://www.youtube.com/user/Ruzaniko>), <http://informatika.am/> կայքից և «Հայկական կրթական միջավայրի պաշարների շտեմարանում» (<http://lib.armedu.am>) տեղադրված էլեկտրոնային ուսումնական նյութերը:

29. 6-7-րդ դասարաններում «Կերպարվեստ» և «Երաժշտություն» առարկաներից մեկը Հաստատության ընտրությամբ դասավանդվում է առաջին, մյուսը՝ երկրորդ կիսամյակում՝ ապահովելով սույն հավելվածով սահմանված՝ տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակի պահպանման պահանջը:

30. «Հայոց պատմություն» և «Համաշխարհային պատմություն» առարկաների համաժամանակյա թեմաների ուսուցումն ապահովելու նպատակով ուսուցիչներին իրավունք է տրվում մասնակի փոփոխություններ կատարելու նշված առարկաների դասացանկում՝ պահպանելով յուրաքանչյուր առարկային հատկացված տարեկան ընդհանուր ժամաքանակը:

31. Հաստատությունում, ըստ կրթական ծրագրերի աստիճանների, տարրական, միջին և ավագ դպրոցներում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների համար «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսուցումը կարող է իրականացվել «Հանրակրթական դպրոցի հատուկ բժշկական խմբերի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի 1-12-րդ դասարանների ծրագրով», Հաստատության խմբակների համար նախատեսված ժամաքանակի շրջանակում կամ տվյալ դասարանի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասաժամերին՝ անհատական ծրագրով: Հաստատությունում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների գնահատում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից չի կատարվում:

**IV. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ  
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾՈՂ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ 2018 - 2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՏԱՐԿԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ:  
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ**

32. Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող առանձին գործող ավագ դպրոցի (այսուհետ՝ Ավագ դպրոց) Ուսումնական պլանները սահմանում են հոսքային ուսուցման ծրագրեր իրականացնող Ավագ դպրոցում միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը՝ ըստ տարբերակված հոսքերի, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների և սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն չափը՝ ըստ դասարանների:

33. Ավագ դպրոցում երաշխավորվում են հոսքերի հետևյալ խմբերը՝

- 1) հիմնական - հումանիտար, բնագիտամաթեմատիկական, արհեստագործական.
- 2) ընդհանուր:

34. Ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների Ուսումնական պլանները ըստ հոսքերի տրված են.

- 1) ընդհանուր հոսքը՝ «Հաստատության ուսումնական պլան»-ում (համաձայն աղյուսակ 1-ի).
- 2) հումանիտար հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի հումանիտար հոսքի X-XII դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն աղյուսակ 2-ի).
- 3) բնագիտամաթեմատիկական հոսքի X-XII դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն աղյուսակ 3-ի).
- 4) արհեստագործական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի արհեստագործական հոսքի X-XII դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն աղյուսակ 4-ի):

35. Ուսումնական պարապմունքները Ավագ դպրոցում սկսվում են 2018թ. սեպտեմբերի 1-ին և ավարտվում 2019թ. մայիսի 24-ին՝ 5-օրյա աշխատանքային շաբաթվա և մայիսի 25-ին՝ 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ ապահովվելով ոչ պակաս, քան 34 ուսումնական շաբաթ Ավագ դպրոցի յուրաքանչյուր դասարանի համար:

36. Ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական, հոսքային, դպրոցական բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ապահովմանը:

37. Ավագ դպրոցում գործում է գնահատման 10 միավորային սանդղակ: Ընթացիկ գնահատման ժամանակ կարող է կիրառվել նաև գնահատման այլ սանդղակ, որը բերվում է 10 միավորային գրանցման: Պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման սանդղակները բերվում են 10 կամ 20 միավորային գրանցման:

38. Ավագ դպրոցում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է:

39. Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների միջոցով՝ տարեկան գնահատականները՝ բացառությամբ այն առարկաների, որոնց ուսումնասիրությունը սույն հավելվածի 20-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջին համապատասխան ավարտվում է 12-րդ դասարանի առաջին կիսամյակի վերջում:

40. Ուսումնական պարապմունքների ընթացքում 10-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2018 թվականի հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 4-ը ներառյալ՝ ձմռային՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ից 2019 թվականի հունվարի 6-ը ներառյալ, գարնանային՝ 2019 թվականի մարտի 25-31-ը ներառյալ:

41. Հոսքային ուսուցման առարկաների դասերին դասարանի միջին խտությունը կարող է սահմանվել 12-15 սովորող՝ սանիտարական նորմերի պահպանմամբ:

42. Ավագ դպրոցի Ուսումնական պլանների ընդհանուր հանրակրթական բաղադրիչի «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու», «Ինֆորմատիկա» (համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների և արհեստագործական մասնագիտական դասընթացների դասաժամերին դասարանը կարող է բաժանվել երկու խմբի, եթե տվյալ դասարանի սովորողների թիվը 20 և ավելի է:

43. Ավագ դպրոցի միևնույն դասարանի(ների) սովորողները ընդհանուր հանրակրթական բաղադրիչի շրջանակում ուսումնասիրվող երկրորդ օտար լեզվի (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ որևէ այլ լեզու) դասաժամին խմբավորվում են ըստ իրենց կողմից հիմնական դպրոցում ուսումնասիրված օտար լեզվի՝ անկախ սովորողների թվից, բայց ոչ ավելի, քան երեք օտար լեզվի (բացի ռուսերենից) համար:

44. 12-րդ դասարանում ուսումնական գործընթացը իրականացվում է սույն Հավելվածի 20-րդ կետի պահանջներին համապատասխան:

**45. Ուսումնական պլանների կառուցվածքը.**

Հոսքային (խորացված) ուսուցման Ուսումնական պլանները կազմված են ընդհանուր հանրակրթական, հոսքային (արհեստագործական հոսքում՝ մասնագիտական) և դպրոցական բաղադրիչներից:

1) Ընդհանուր հանրակրթական բաղադրիչը ներառում է հանրակրթական ուսումնական առարկան(երը) և յուրաքանչյուր առարկայի համար նախատեսված շաբաթական ժամաքանակները՝ ըստ դասարանների: Ընդհանուր հանրակրթական առարկաները պարտադիր են տվյալ հոսքի (ենթահոսքի) համար.

2) Հոսքային բաղադրիչով սահմանված ժամաքանակը տրամադրվում է խորացված ուսուցմամբ առարկաների դասավանդմանը, իսկ արհեստագործական հոսքում՝ մասնագիտական դասընթացներին: Հոսքային բաղադրիչում ընդգրկված առարկաները (դասընթացները) ուղղված են սովորողի հետագա մասնագիտական կրթության հիմքերի ստեղծմանը և հանրակրթությունից մասնագիտական կրթության անցման շարունակականության ապահովմանը, իսկ արհեստագործական հոսքի պարագայում՝ նախնական մասնագիտական կրթության որոշակի որակավորումների շրջանակում համապատասխան հմտությունների ձեռքբերմանը.

3) Նախարարությունը, հաշվի առնելով տվյալ Ավագ դպրոցի առանձնահատկությունները, խորացված ուսուցմամբ առարկաների ցանկում կատարում է փոփոխություններ՝ տվյալ հոսքի խորացված ուսուցման առարկաներին ավելացնելով նոր առարկա(ներ)՝ Ավագ դպրոցի առաջարկության և սահմանված կարգով հաստատված առարկայական ծրագրի(երի) առկայության դեպքում.

4) Դպրոցական բաղադրիչն ընդգրկում է հոսքային ուսուցման բովանդակությունը լրացնող ընտրովի (լրացուցիչ) առարկաները, դասընթացները և դրանց ուսուցման համար ըստ

դասարանների նախատեսված ժամաքանակները: Այս բաղադրիչը տնօրինում է դպրոցը՝ ղեկավարվելով Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկով:

5) Ավագ դպրոցը Ուսումնական պլանների հիման վրա ընդհանուր հանրակրթական, հոսքային, դպրոցական բաղադրիչների տնօրինմամբ մշակում է յուրաքանչյուր հոսքի՝ տվյալ ուստարվա ենթահոսքերի իր ուսումնական պլանները: Ենթահոսքերի ուսումնական պլանները կազմելիս դպրոցն ընդհանուր հանրակրթական և հոսքային բաղադրիչներով նախատեսված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը հատկացնում է դպրոցական բաղադրիչին:

6) Ընդհանուր հանրակրթական, հոսքային և դպրոցական բաղադրիչները ֆինանսավորվում են պետական բյուջեից:

7) 10-11-րդ դասարաններում և 12-րդ դասարանի առաջին կիսամյակում շաբաթական ուսումնական պարտադիր բեռնվածությունը բոլոր հոսքերում սահմանվում է 34 դասաժամ:

**46. Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգը հոսքային ուսուցմամբ դասարաններում.**

1) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը տրամադրվում է Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկի, ինչպես նաև տվյալ հոսքային ուսուցմամբ դասարանի ընդհանուր հանրակրթական և հոսքային ուսուցման բաղադրիչների առարկաներին:

2) Ավագ դպրոցի խորացված ուսուցմամբ հոսքերի համար կարող են երաշխավորվել լրացուցիչ հետևյալ «Գրաբար» (11-րդ դասարան), «Արտասահմանյան գրակառություն» (11-րդ դասարան), «Բանահյուսություն» (հին և միջնադարյան շրջան, 11-րդ դասարան), «Ճարտասանություն» (11-րդ դասարան), «Արևմտահայերեն» (10-րդ կամ 11-րդ դասարան), «Պետության և իրավունքի հիմունքներ» (11-րդ դասարան), «Հայկական հարցի պատմություն» (11-րդ դասարան), «Հնագիտություն» (10-րդ դասարան), «Ազգագրություն» (10-րդ դասարան), «Հայաստանի հարակից երկրների պատմություն» (11-րդ դասարան), «Կրոնի պատմություն» (11-րդ դասարան), «Արվեստի պատմություն» (10-11-րդ դասարաններ), «Հայոց եկեղեցու պատմություն» (բնագիտամաթեմատիկական հոսք, 10-11-րդ դասարաններ), «Քրիստոնեական բարոյագիտություն» (12-րդ դասարան), «Տնտեսագիտություն» (10-11-րդ դասարան), «Բարոյագիտություն» (10-րդ դասարան), «Տրամաբանություն (11-րդ դասարան), «Թվային համակարգեր» (10-րդ դասարան), «Երկրաչափության հիմունքներ» (12-րդ դասարան), «Դիսկրետ մաթեմատիկայի տարրեր» (11-րդ դասարան), «Աստղագիտություն» (10-11-րդ դասարաններ), «Ռադիոէլեկտրոնիկա» (11-րդ դասարան), «Բնօգտագործման և բնապահպանության հիմունքներ» (10-11-րդ դասարաններ), «Էկոլոգիայի և կայուն զարգացման հիմունքներ» (10-11-րդ դասարաններ), «Կիրառական քիմիա» (11-րդ դասարան), «Գիտական ճանաչողության հիմունքներ» (11-րդ դասարան), «Բնական գիտությունները և մաթեմատիկական» (10-րդ դասարան), «Բնագիտական մտքի պատմություն» (11-րդ դասարան), «Երկրագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Քերականություն և բառագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Գրականություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Մասնագիտական կողմնորոշում» (10-րդ կամ 11-րդ դասարան) առարկաների ուսուցումը՝ դրանց առարկայական ծրագրերը Նախարարության կողմից հաստատվելուց հետո:

3) Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո:

47. 10-11-րդ դասարաններում Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութերի հիման վրա դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ:

1) «Առողջ ապրելակերպ» դասընթացին տրամադրված ժամաքանակը ձևավորվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի տարեկան ժամաքանակից առանձնացված 14 դասաժամի հաշվին:

2) «Ֆիզկուլտուրա» առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը ենթարկվում են թեմատիկ վերաբաշխման՝ պահպանելով տվյալ դասարանի համար Նախարարության հաստատած ծրագրային ամբողջ ծավալը:

3) «Առողջ ապրելակերպ» դասընթացը դասավանդվում է 2019 թվականի հունվար-փետրվար ամիսներին:

4) «Առողջ ապրելակերպ» դասընթացի ընթացիկ գնահատում չի կատարվում: Դասամատյանում դասընթացի գրանցումները կատարվում են առանձին էջում:

#### **48. Օտար լեզվի ընտրության կարգ.**

1) Ավագ դպրոցում դասավանդվում է առնվազն երկու օտար լեզու, որոնցից մեկը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ որևէ այլ լեզու:

2) Հաստատության ընտրությամբ երրորդ (հիմնական և մյուս օտար լեզվից բացի) օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլն) կարելի է դասավանդել Նախարարության կողմից հաստատված համապատասխան առարկայական չափորոշիչներով և ծրագրերով (շաբաթական 2 ժամ), ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում:

3) Ավագ դպրոցը դասավանդվող օտար լեզուն կարող է փոխարինել այլ օտար լեզվով՝ Նախարարության որոշմամբ: Նախարարությունը քննարկում է Ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի առաջարկությունը օտար լեզվի փոխարինման վերաբերյալ և կայացնում համապատասխան որոշում:

4) Նոր հիմնադրված Ավագ դպրոցում դասավանդվող երկրորդ օտար լեզուն Հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ որոշում է Նախարարությունը:

#### **49. Սույն հավելվածի աղյուսակների պարզաբանումներ.**

1) Սույն հավելվածի Աղյուսակ 2-ում՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ որպես խորացված ուսուցման առարկաներ՝ սովորողն ընտրում է բերված ցանկից մինչև չորս առարկա:

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը»:

գ. «Օտար լեզու-1» և «Ռուսաց լեզու-1» առարկաներն ընտրելու դեպքում սովորողը չի ուսումնասիրում «Օտար լեզու-2» և «Ռուսաց լեզու-2» առարկաները:

2) Սովորողը խորացված ուսուցմամբ առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) ընտրում է որոշակի թվով առարկաներ՝ համաձայն սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության պարզաբանման: Այդ դեպքում սովորողը չի ուսումնասիրում Ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված միննույն առարկաները:

3) Հումանիտար հոսքի որևէ ենթահոսքի առարկաների՝ հոսքային և ընդհանուր հանրակրթական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը տրվում է Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչին: Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը բաշխվում է սույն հավելվածի 19-րդ կետի համաձայն պահպանելով տվյալ դասարանի համար Ուսումնական պլանով սահմանված շաբաթական ժամաքանակը: Ուսուցումը կազմակերպվում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի կողմից հաստատված հոսքային և/կամ ընդհանուր հանրակրթական առարկաների ծրագրերով՝ ուսուցչի ընտրությամբ:

4) Ավագ դպրոցի հումանիտար հոսքի Ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 2-ի)՝ 11-րդ դասարանում դպրոցական բաղադրիչում ձևավորված ժամաքանակից 0.5 ժամ կարող է հատկացվել «Հասարակագիտություն» առարկային՝

հանրակրթական դպրոցի ընդհանուր հոսքի համար նախատեսված ծրագրով ուսուցում կազմակերպելու նպատակով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 1-ի):

5) Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի Ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 3-ի)՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ որպես խորացված ուսուցման առարկաներ՝ սովորողն ընտրում է բերված ցանկից մինչև երեք առարկա:

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը»:

գ. «Օտար լեզու-1» առարկան ընտրելու դեպքում սովորողը չի ուսումնասիրում «Օտար լեզու-2» առարկան:

6) Սույն հավելվածի Աղյուսակ 3-ում՝

ա. Սովորողը խորացված ուսուցմամբ առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) առարկա(ներ) ընտրելու դեպքում չի ուսումնասիրում Ուսումնական պլանի Ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված մինչև երեք առարկան(երը):

բ. Բնագիտամաթեմատիկական հոսքի որևէ ենթահոսքի առարկաների՝ հոսքային և ընդհանուր հանրակրթական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը տրվում է Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչին:

գ. Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը բաշխվում է սույն հավելվածի 19-րդ կետի համաձայն «Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգի» համաձայն՝ պահպանելով տվյալ դասարանի համար Ուսումնական պլանով սահմանված շաբաթական ժամաքանակը: Ուսուցումը կազմակերպվում է հոսքային և ընդհանուր հանրակրթական առարկաների՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի կողմից հաստատված առարկայական ծրագրերով՝ ուսուցչի ընտրությամբ:

դ. 11-12-րդ դասարաններում «Հասարակագիտություն» առարկան ուսումնասիրվում է հանրակրթական դպրոցի հումանիտար և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար նախատեսված ծրագրով:

ե. Եթե սովորողը 12-րդ դասարանում չի ուսումնասիրում «Օտար լեզու-1» առարկան, ապա շարունակում է ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված «Օտար լեզու-2» և «Ռուսաց լեզու» առարկաների համապատասխան ծրագրերի ուսումնասիրությունը:

զ. «Համաշխարհային պատմություն» առարկան ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել սույն հավելվածի Աղյուսակ 3-ի ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և ուսումնասիրվել առարկայի՝ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար երաշխավորված ծրագրով:

7) Սույն հավելվածի Աղյուսակ 4-ում՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ մասնագիտական դասընթացներ (առարկաներ) են համարվում դպրոցի կողմից իրականացվող նախամասնագիտական ուսումնական ծրագրերը:

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը»:

8) Ավագ դպրոցի արհեստագործական հոսքի Ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 4-ի)՝

ա. Մասնագիտական դասընթացների (առարկաների) ժամաքանակը ներառում է նաև պրակտիկ ուսուցման ժամերը:

բ. Ուսումնական պլանով 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակի ժամաքանակը տնօրինվում է սույն հավելվածի 20-րդ կետով սահմանված կարգով՝ ներառյալ ուսումնական պրակտիկայի կազմակերպումը: Ուսուցումը կազմակերպվում է ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի կողմից հաստատված հոսքային և/կամ ընդհանուր հանրակրթական առարկաների ծրագրերով՝ ուսուցչի ընտրությամբ:

գ. «Համաշխարհային պատմություն» առարկան դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և ուսումնասիրվել առարկայի՝ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար երաշխավորված ծրագրով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 4-ի):

9) Ռուսերենով ուսուցմամբ միջնակարգ հանրակրթական դպրոցի (դասարանի) Ուսումնական պլանի (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 6-ի)՝ «Մայրենի» (հայերեն) առարկայի դասաժամերը 1-ին դասարանի 1-ին կիսամյակում հատկացվում են բանավոր խոսքի զարգացմանը, 2-րդ կիսամյակում՝ տառուսուցմանը:

10) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների Ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 6-ի)՝ 6-9-րդ դասարաններում «Հայոց եկեղեցու պատմությանը» լրացուցիչ դասաժամեր չեն հատկացվում:

11) Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող երեխաների անհատական ուսուցման Ուսումնական պլանով (համաձայն աղյուսակ 7-ի)՝ և տնային ու հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող չափավոր և ծանր հետամնացություն ունեցող երեխաների անհատական ուսուցման ուսումնական պլանով (համաձայն աղյուսակ 8-ի):

ա. Ռուսերենով ուսուցման դեպքում ռուսաց լեզվին տրվում են հայերենի (տարրական դպրոցում՝ «Մայրենի», միջին և ավագ դպրոցում՝ «Հայոց լեզու և գրականություն» առարկաների) համար հատկացված դասաժամերը՝ ապահովելով նույն ժամաքանակի սահմաններում նաև ռուս գրականության ուսուցումը, իսկ ռուսերենի համար նախատեսված ժամաքանակը տրվում է հայոց լեզվի ուսուցմանը: 1-ին դասարանում ռուսաց լեզվին հատկացված ժամաքանակից 2 ժամը տրվում է հայերենի (Մայրենի) ուսուցմանը,

բ. Տնային պայմաններում ուսուցում կազմակերպվում է բնակավայրը սպասարկող բուժհիմնարկի փաստաթղթերի հիման վրա (եթե բուժման ընթացքը տնային պայմաններում շարունակվելու է մեկ ամսից ավելի)՝ ըստ Հաստատության ենթակայության՝ համապատասխան Լիազորված մարմնի գիտությամբ,

գ. Տնային պայմաններում ուսուցման կազմակերպումն իրականացնում է այն Հաստատությունը, որտեղ հաշվառված է սովորողը,

դ. Տնային պայմաններում ուսուցում կազմակերպող ուսուցիչները վճարվում են դրույքաչափով, եթե ուսուցումը նախատեսվում է ամբողջ ուստարվա համար, մնացած դեպքերում՝ ժամավճարով,

ե. Հիվանդանոցներում երկարատև բուժվող երեխաների ուսուցումը կազմակերպվում է՝ ըստ դասարանների՝ վերոնշյալ կարգի պահպանմամբ, տվյալ բուժհաստատությունը սպասարկող ուսումնական Հաստատության կողմից (համաձայն աղյուսակ 7-ի):

## Հաստատության ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Մայրենի	7	8	8	8	7	6	-	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2	2	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3	-	-	-
Հայ գրականություն	-	-	-	-	-	-	-	-	-	2	3	3
Ռուսաց լեզու	-	2	2	3	3	3	3	3	3	2	2	2
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	-	-	-	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-	-	-	-
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-	2	1	1
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5	2	2	2
Համաշխարհային պատմ.	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	1	1	1	1	1	1	1	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1	2	2	2
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3	2.5	2.5	2.5
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2	1.5	1.5	1.5
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2	2	3	3
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2	2	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	1	1	1	1	2	-	-	-	-	-
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	1	1	1	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3	3	3	1.5
Շախմատ	-	2	2	2	-	-	-	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	1	2	2	2	2.5	2.5	2.5	2.5	3	2	5.5
<b>Ընդամենը</b>	<b>20</b>	<b>24</b>	<b>26</b>	<b>28</b>	<b>29</b>	<b>31</b>	<b>34</b>	<b>35</b>	<b>35</b>	<b>34</b>	<b>34</b>	<b>34</b>



Ավագ դպրոցի հումանիտար հոսքի ուսումնական պլան  
X-XII դասարաններ

Առարկայա- խումբ	Առարկա	Շաբաթական ժամերի քանակը		
		X	XI	XII
	Հոսքային բաղադրիչ			
<b>Խորացված ուսուցմամբ առարկաներ <sup>1</sup></b>	Հայոց լեզու-1	2	2	3
	Հայ գրականություն-1	3	4	5
	Հայոց պատմություն-1	3	5	8
	Համաշխ. պատմություն-1	3	5	8
	Օտար լեզու-1	3	5	8
	Ռուսաց լեզու-1 (Ռուսաց լեզու, Ռուս գրականություն)	3	5	8
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
<b>Ընդհանուր հանրակրթա- կան առարկաներ</b>	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	3	3
	Հայոց պատմություն	2	2	2
	Համաշխ. պատմություն	2	1	1
	Հասարակագիտություն	2	1.5	1
	Օտար լեզու-2	2	2	2
	Ռուսաց լեզու-2	2	2	2
	Հայոց եկեղեցու պատմություն	1	1	-
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	3	3	3
	Բնագիտական առարկա <sup>2</sup>	2	1	1
	Բնագիտական առարկա <sup>2</sup>	1	1	-
	Բնագիտական առարկա <sup>2</sup>	1	-	-
	Բնագիտական առարկա <sup>2</sup>	1	-	-
	Ինֆորմատիկա	1	1	-

	Ֆիզկուլտուրա	3	3	1
	ՆԶՊ	1	1	1
	Դպրոցական բաղադրիչ			
<b>Ընդամենը</b>		<b>34</b>	<b>34</b>	<b>34</b>

Աղյուսակ 3

Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի ուսումնական պլան  
X-XII դասարաններ

Առարկայախումբ	Առարկա	Շաբաթական ժամերի քանակը		
		X	XI	XII
	Հոսքային բաղադրիչ			
<b>Խորացված ուսուցմամբ առարկաներ <sup>1</sup></b>	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)-1	7	8	8
	Ֆիզիկա-1	4	5	8
	Քիմիա-1	4	5	8
	Կենսաբանություն-1	4	5	8
	Աշխարհագրություն-1	3	5	8
	Ռուսաց լեզու-1 (Ռուսաց լեզու, Ռուս գրականություն)	3	5	8
	Օտար լեզու-1 <sup>3</sup>	3	5	8
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
<b>Ընդհանուր հանրակրթական առարկաներ</b>	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	2	2
	Հայոց պատմություն	2	2	2
	Հասարակագիտություն	2	1,5	1
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	5	5	5
	Բնագիտական առարկա <sup>2</sup>	2	1	1

	Բնագիտական առարկա <sup>2</sup>	1	1	-
	Բնագիտական առարկա <sup>2</sup>	1	1	-
	Բնագիտական առարկա <sup>2</sup>	1	-	-
	Ինֆորմատիկա	1	2	1
	Օտար լեզու-2	2	2	2
	Ռուսաց լեզու	1	1	1
	Ֆիզկուլտուրա	3	3	1
	ՆԶՊ	1	1	1
	Դպրոցական բաղադրիչ			
<b>Ընդամենը</b>		<b>34</b>	<b>34</b>	<b>34</b>

**Ավագ դպրոցի արհեստագործական հոսքի ուսումնական պլան  
X-XII դասարաններ**

Առարկայախումբ	Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը		
		X	XI	XII
	Հոսքային բաղադրիչ			
<b>Մասնագիտական դասընթացներ (առարկաներ)<sup>1</sup></b>		9	13	15.5
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
<b>Ընդհանուր հանրակրթական առարկաներ</b>	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	2	2
	Հայոց պատմություն	2	2	2
	Օտար լեզու	2	2	2
	Ռուսաց լեզու	2	2	2
	Հասարակագիտություն	2	1	1
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	3	3	3
	Բնագիտական առարկա <sup>2</sup>	2	1	1
	Բնագիտական առարկա <sup>2</sup>	1	1	-
	Բնագիտական առարկա <sup>2</sup>	1	-	-
	Բնագիտական առարկա <sup>2</sup>	1	-	-
	Ինֆորմատիկա և S2S	1	1	1
	Ֆիզկուլտուրա	3	3	1.5
	ՆԶՊ	1	1	1
	Դպրոցական բաղադրիչ			
<b>Ընդամենը</b>		<b>34</b>	<b>34</b>	<b>34</b>

**Ռուսերենի խորացված ուսուցմամբ I-IX դասարանների  
ուսումնական պլան**

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը								
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Մայրենի	7	8	8	8	7	6	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3
Ռուսաց լեզու	-	3	4	4	4	4	4	4	4
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	2
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5
Հայոց եկեղեցու պատմություն	-	-	-	-	1	1	1	1	1
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2

Կենսաբանություն	-	-	-	-	-	-	-	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	1	1	1	1	1	2	-	-
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	-	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3	3
Շախմատ	-	2	2	2	-	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	-	-	1	1	1.5	1.5	1.5	1.5	1.5
<b>Ընդամենը</b>	<b>20</b>	<b>24</b>	<b>26</b>	<b>28</b>	<b>29</b>	<b>31</b>	<b>34</b>	<b>35</b>	<b>35</b>	<b>35</b>

**Աղյուսակ 6**

**Ռուսերենով ուսուցմամբ միջնակարգ հանրակրթական դպրոցի (դասարանի) ուսումնական պլան**

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Ռուսաց լեզու	4	8	6	8	6	3	3	3	2.5	3	3	3
Ռուս գրականություն	-	-	-	-	-	2	2	2	2	3	3	3
Մայրենի	3	3	5	4	6	5	-	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2	2	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3	-	-	-
Հայ գրականություն	-	-	-	-	-	-	-	-	-	2	2	2
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	5	4	5	5	-	-	-	-	-	-
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3	2.5	2.5	2.5
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2	1.5	1.5	1.5
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Տեխնոլոգիա	2	1	1	1	1	1	2	-	-	-	-	-

Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Հայաստանի աշխարհ.	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-	1.5	1	1
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5	2	2	2
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1	1.5	1	1
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	1	1	1	1	1	-	-	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1	1	1.5	2
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2	3	3	3
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2	2	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	1	1	1	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3	3	3	1.5
Շախմատ	-	2	2	2	-	-	-	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	1	-	1	-	1.5	0.5	0.5	1	-	0.5	2.5
<b>ԸՆԴԱՄԱՆԵՐ</b>	<b>20</b>	<b>24</b>	<b>26</b>	<b>28</b>	<b>29</b>	<b>31</b>	<b>34</b>	<b>35</b>	<b>35</b>	<b>34</b>	<b>34</b>	<b>34</b>

**Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող երեխաների  
անհատական ուսուցման ուսումնական պլան**

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	Տարրական դպրոց				Միջին դպրոց				Ավագ դպրոց			
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Մայրենի	5	4.5	4.5	4.5	4.5	4	-	-	-	-	-	-
Հայոց լեզու և գրակ.	-	-	-	-	-	-	3.5	2.5	3	2.5	2	2
Ռուսաց լեզու	-	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Օտար լեզու	-	-	1	1	1	1	1	1	1	1	1	1
Ես և շրջակա աշխարհը	-	0.5	0.5	0.5	-	-	-	-	-	-	-	-
Մաթեմատիկա	2	3	2	2	2	2	2	3	2.5	2.5	2	2
Հայոց պատմություն	-	-	-	-	-	0.5	1	0.5	0.5	0.5	0.5	0.5
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	1	1	1
Քիմիա	-	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Բնագիտություն	-	-	-	-	0.5	0.5	-	-	-	-	-	-
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Աշխարհագրություն	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
<b>Ընդամենը</b>	<b>7</b>	<b>9</b>	<b>9</b>	<b>9</b>	<b>9</b>	<b>10</b>	<b>11</b>	<b>11</b>	<b>11</b>	<b>11</b>	<b>10</b>	<b>10</b>



**Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների անհատական ուսուցման ուսումնական պլան**

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը								
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Լեզու և ընթերցանություն	3	3	3	3	3	3	3	3	3
Մաթեմատիկա	2	2	2	2	2	2	2	2	2
Ես և շրջակա աշխարհը	1	2	2	2	1	1	1	1	1
Տեխնոլոգիա (Ձեռքի աշխատանք)	1	2	2	2	1	2	2	2	2
Բնագիտություն	-	-	-	-	1	1	1	1	1
Հայրենագիտություն	-	-	-	-	1	1	2	2	2
<b>Ընդամենը</b>	<b>7</b>	<b>9</b>	<b>9</b>	<b>9</b>	<b>9</b>	<b>10</b>	<b>11</b>	<b>11</b>	<b>11</b>

Արցախի Հանրապետության կրթության,  
գիտության և սպորտի նախարարության  
աշխատակազմի ղեկավար՝

Է. Գրիգորյան

Գրանցված է  
Արցախի Հանրապետության  
արդարադատության նախարարության  
կողմից 2018 թվականի հուլիսի 11-ին  
Պետական գրանցման համարը 1111848

## ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

### ՀՐԱՄԱՆ

«22» հունիսի 2018 թվական

N 190-Ն

ք.Ստեփանակերտ

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի ԹԻՎ 42 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարու-  
թյան 2008 թվականի մարտի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությու-  
նում հաշվապահների որակավորման քննությունների հարցերի (թեստերի)  
ցանկը (հարցաշարը), ծրագիրը, որի շրջանակներում կազմվելու են հարցա-  
թերթիկում ներառվող խնդիրները, քննությունների ընթացքում օգտվելու  
համար թույլատրվող նորմատիվ իրավական ակտերի ցանկը հաստատելու  
մասին» թիվ 42 հրամանով հաստատված N1 հավելվածում կատարել փոփո-  
խություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման  
օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1. «Հարկեր և այլ պարտադիր վճարներ» բաժնում`
  - 1) 12-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.  
«12. «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն` հարկային պարտավորությունը դադարում է`
    - երբ այն դառնում է անհուսալի և անհուսալի դառնալուց հետո` հինգ տարվա ընթացքում չի գանձվում  
(«Հարկերի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 16)».
  - 2) 12<sup>2</sup>-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.  
«12<sup>2</sup>. «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն` հարկային պարտավորությունը դադարում է`
    - երբ սահմանվում է հարկային պարտավորության գծով ազատման կամ նվազեցման հարկային արտոնություն` ազատված կամ նվազեցված պարտավորության չափով  
(«Հարկերի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 16)».
  - 3) 12<sup>3</sup>-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.  
«12<sup>3</sup>. «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում` հարկային գործակալը) վճարում է տույժ ժամանակին չմուծված հարկի գումարի`
    - 0,075 տոկոսի չափով` դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար  
(«Հարկերի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 23)».
  - 4) հանել 54-րդ հարցը.
  - 5) 71<sup>2</sup>-րդ հարցից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր` 71<sup>3</sup>-րդ հարց.  
«71<sup>3</sup>. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն` եկամուտ չեն համարվում`
    - հարկային պարտավորությունների կատարմանն ուղղվող` պետական կամ համայնքային բյուջեից տրամադրվող գումարները  
(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 8)».
  - 6) 77<sup>2</sup>-րդ հարցից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր` 77<sup>3</sup>-րդ հարց.  
«77<sup>3</sup>. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն` ծախս չեն համարվում`
    - հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների լուծարման ծախսերը, ինչպես նաև լուծարվող հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները  
(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 11)».
  - 7) 89-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«89. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, անհատույց ստացված ակտիվները (բացառությամբ՝ դրամական միջոցների և հողամասերի) եկամուտ են համարվում՝

- այն հաշվետու տարում, երբ դրանք ճանաչվում են որպես ծախս կամ կորուստ՝ անկախ այդ ծախսը կամ կորուստը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից («Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 24)».

8) 89-րդ հարցից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 89<sup>1</sup>-89<sup>4</sup>-րդ հարցեր.

«89<sup>1</sup>. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, անհատույց ստացված դրամական միջոցները եկամուտ են համարվում՝

- դրանց ստացման հաշվետու տարում, բացառությամբ պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում ստացված նպատակային դրամական միջոցների

(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 24)

89<sup>2</sup>. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում ստացված նպատակային դրամական միջոցները եկամուտ են համարվում՝

- այն հաշվետու տարում, երբ այդ դրամական միջոցները կամ այդ դրամական միջոցներով ձեռք բերված, կառուցված, ստեղծված կամ մշակված ակտիվները ճանաչվում են որպես ծախս

(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 24)

89<sup>3</sup>. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում որպես արդեն իսկ կատարված ծախսերի կամ ստացված վնասների փոխհատուցում ստացված նպատակային դրամական միջոցները եկամուտ են համարվում՝

- դրանց ստացման հաշվետու տարում

(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 24)

89<sup>4</sup>. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, անհատույց ստացված հողամասերը եկամուտ են համարվում՝

- տասը հաշվետու տարիների ընթացքում, ներառյալ՝ դրանց ստացման հաշվետու տարին՝ յուրաքանչյուր հաշվետու տարում հավասարաչափ

(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 24)».

9) 106-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«106. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, Արցախի Հանրապետության տարածքից դուրս Արցախի Հանրապետության ռեզիդենտին կամ այլ ոչ ռեզիդենտի՝ Արցախի Հանրապետությունում հաշվառված առանձնացված ստորաբաժանմանը ծառայությունների մատուցումից ստացված եկամուտներ են համարվում՝

- խորհրդատվական, իրավաբանական, թարգմանչական, ինժեներական և համանման այլ ծառայություններից ստացված եկամուտները

(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 51)».

10) 107-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«107. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, Արցախի Հանրապետության տարածքից դուրս Արցախի Հանրապետության ռեզիդենտին կամ այլ ոչ ռեզիդենտի Արցախի Հանրապետությունում հաշվառված առանձնացված ստորաբաժանմանը ծառայությունների մատուցումից ստացված եկամուտներ են համարվում՝

- հաշվապահական, կառավարման, փորձագիտական, մարքեթինգային, գովազդային և համանման այլ ծառայություններից ստացված եկամուտները

(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 51)».

11) 110-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«110. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ ոչ ռեզիդենտը վերադաս հարկային մարմնի կողմից հաստատված ձևով տարեկան եկամուտների մասին հաշվարկը, որտեղ ներառվում են արցախյան աղբյուրներից ստացված բոլոր եկամուտները, հարկային մարմիններ է ներկայացնում՝

- հաշվետու տարվան հաջորդող ապրիլի 20-ից ոչ ուշ

(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 58)».

12) 118-րդ հարցում «ղարաբադյան» բառը փոխարինել «արցախյան» բառով.

13) 127-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«127. «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ նվազեցվող եկամուտ է համարվում՝

- Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով իրականացվող՝ գովազդային վիճակախաղերի մասնակիցների դրամական և իրային շահումները՝ յուրաքանչյուր շահման դեպքում 50000 ՀՀ դրամը չգերազանցող չափով, խաղարկությունով, ոչ խաղարկությունով և համակցված վիճակախաղերի մասնակիցների դրամական և իրային շահումները

(«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 6)».

14) 131-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«131. «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ ֆիզիկական անձի կողմից գրավ դրված գույքը բռնագանձման արդյունքում սեփականության իրավունքով գրավառու բանկին կամ վարկային կազմակերպությանն անցնելու դեպքում գրավատու ֆիզիկական անձի՝ գույքն օտարելուց ստացված եկամուտ է համարվում՝

- գրավ դրված գույքի օտարման գնի և վարկային պարտավորության դրական տարբերությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի

(«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 9)».

15) 132-րդ, 133-րդ, 134-րդ, 137<sup>1</sup>-ին և 137<sup>2</sup>-րդ հարցերում «ղարաբադյան» բառերը փոխարինել «արցախյան» բառերով:

2. «Տնտեսական իրավունք և աուդիտ» բաժնում՝

1) 15-20-րդ հարցերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» բառերով.

2) 25<sup>57</sup>-25<sup>66</sup>-րդ հարցերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» բառերով.

3) 25<sup>57</sup>-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«25<sup>57</sup>. «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ Արցախի Հանրապետության բյուջետային համակարգն իրավունքի նորմերով կարգավորվող Արցախի Հանրապետության տնտեսական հարաբերությունների և Արցախի Հանրապետության պետական կառուցվածքի վրա հիմնված հետևյալ երկու մակարդակի բյուջեների ամբողջությունն է՝

- առաջին մակարդակ՝ պետական բյուջե և երկրորդ մակարդակ՝ համայնքների բյուջեներ

(«Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 3)».

4) 25<sup>62</sup>-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«25<sup>62</sup>. «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ պետական բյուջեի նախագիծը ներառում է՝

- Արցախի Հանրապետության Նախագահի բյուջետային ուղերձը և պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը

(«Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 17)».

5) 91-93-րդ հարցերում «Հաղորդակցությունը կառավարման օղակներում գտնվող անձանց հետ» բառերը փոխարինել «Հաղորդակցումը կառավարման օղակներում գտնվող անձանց հետ» բառերով.

6) 91-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«91. «Հաղորդակցումը կառավարման օղակներում գտնվող անձանց հետ» ԱՄՍ 260-ի համաձայն՝ աուդիտորը կառավարման օղակներում գտնվող անձանց ամփոփ ձևով պետք է տեղեկացնի՝

- աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների մասին, այդ թվում նաև աուդիտորի կողմից հայտնաբերած նշանակալի ռիսկերի մասին

(ԱՄՍ 260, կետ 15)».

7) 206-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«206. «Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիքի ձևավորում և ներկայացում» ԱՄՄ 700-ի համաձայն՝ ընդհանուր նպատակի հիմունքները՝

- ֆինանսական հաշվետվողականության հիմունքներ են, որոնք նախագծված են բավարարելու մեծ թվով օգտագործողների՝ ֆինանսական տեղեկատվության նկատմամբ ունեցած ընդհանուր կարիքները

(ԱՄՄ 700, կետ 7)»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Գրանցված է  
Արցախի Հանրապետության  
արդարադատության նախարարության  
կողմից 2018 թվականի հուլիսի 11-ին  
Պետական գրանցման համարը 1111849

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**ՀՐԱՄԱՆ**

«22» հունիսի 2018 թվական

N 191-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի ԹԻՎ 74 ՀՐԱՄԱՆՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝

**ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ՝**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարու-  
թյան 2008 թվականի մայիսի 21-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետու-  
թյունում աուդիտորների որակավորման քննությունների հարցերը (թեստերը)  
և տիպային խնդիրները հաստատելու մասին» թիվ 74 հրամանով հաստատ-  
ված հավելվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն  
հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման  
օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



1. «Հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ» բաժնում՝

1) 14-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14. «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ հարկային պարտավորությունը դադարում է՝

- երբ այն դառնում է անհուսալի և անհուսալի դառնալուց հետո՝ հինգ տարվա ընթացքում չի գանձվում

(«Հարկերի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 16)».

2) 15-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15. «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ հարկային պարտավորությունը դադարում է՝

- երբ սահմանվում է հարկային պարտավորության գծով ազատման կամ նվազեցման հարկային արտոնություն՝ ազատված կամ նվազեցված պարտավորության չափով («Հարկերի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 16)».

3) 16-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16. «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ ժամանակին չմուծված հարկի գումարի՝

- 0,075 տոկոսի չափով՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար

(«Հարկերի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 23)».

4) հանել 16<sup>1</sup>-ին հարցը.

5) 28-րդ հարցից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 28<sup>1</sup>-28<sup>2</sup>-րդ հարցեր.

«28<sup>1</sup>. «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ ԱԱՀ-ով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում)՝

- իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում անձին պատկանող բաժնեմասի կամ փայլի նկատմամբ սեփականության իրավունքի՝ այլ անձի օտարումը, ինչպես նաև ապապետականացման գործարքները

(«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 7)

28<sup>2</sup>. «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ ԱԱՀ-ով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում)՝

- պետության կամ համայնքի կողմից իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում գույքի ներդրումը

(«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 7)».

6) հանել 71-րդ հարցը.

7) 88<sup>2</sup>-րդ հարցից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 88<sup>3</sup>-րդ հարց.

«88<sup>3</sup>. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ եկամուտ չեն համարվում՝  
- հարկային պարտավորությունների կատարմանն ուղղվող՝ պետական կամ համայնքային բյուջեից տրամադրվող գումարները  
(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 8)».

8) 94<sup>2</sup>-րդ հարցից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 94<sup>3</sup>-րդ հարց.

«94<sup>3</sup>. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ ծախս չեն համարվում՝  
- հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների լուծարման ծախսերը, ինչպես նաև լուծարվող հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները  
(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 11)».

9) 106-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«106. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, անհատույց ստացված ակտիվները (բացառությամբ՝ դրամական միջոցների և հողամասերի) եկամուտ են համարվում՝  
- այն հաշվետու տարում, երբ դրանք ճանաչվում են որպես ծախս կամ կորուստ՝ անկախ այդ ծախսը կամ կորուստը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից  
(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 24)».

10) 106-րդ հարցից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 106<sup>1</sup>-106<sup>4</sup>-րդ հարցեր.

«106<sup>1</sup>. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, անհատույց ստացված դրամական միջոցները եկամուտ են համարվում՝  
- դրանց ստացման հաշվետու տարում, բացառությամբ պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում ստացված նպատակային դրամական միջոցների  
(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 24)

106<sup>2</sup>. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում ստացված նպատակային դրամական միջոցները եկամուտ են համարվում՝  
- այն հաշվետու տարում, երբ այդ դրամական միջոցները կամ այդ դրամական միջոցներով ձեռք բերված, կառուցված, ստեղծված կամ մշակված ակտիվները ճանաչվում են որպես ծախս  
(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 24)

106<sup>3</sup>. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում որպես արդեն իսկ կատարված ծախսերի կամ ստացված վնասների փոխհատուցում ստացված նպատակային դրամական միջոցները եկամուտ են համարվում՝

- դրանց ստացման հաշվետու տարում  
(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 24)

106<sup>4</sup>. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, անհատույց ստացված հողամասերը եկամուտ են համարվում՝

- տասը հաշվետու տարիների ընթացքում, ներառյալ՝ դրանց ստացման հաշվետու տարին՝ յուրաքանչյուր հաշվետու տարում հավասարաչափ  
(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 24)».

11) 128-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«128. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, Արցախի Հանրապետության տարածքից դուրս Արցախի Հանրապետության ռեզիդենտին կամ այլ ոչ ռեզիդենտի՝ Արցախի Հանրապետությունում հաշվառված առանձնացված ստորաբաժանմանը ծառայությունների մատուցումից ստացված եկամուտներ են համարվում՝

- խորհրդատվական, իրավաբանական, թարգմանչական, ինժեներական և համանման այլ ծառայություններից ստացված եկամուտները  
(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 51)».

12) 129-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«129. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, Արցախի Հանրապետության տարածքից դուրս Արցախի Հանրապետության ռեզիդենտին կամ այլ ոչ ռեզիդենտի՝ Արցախի Հանրապետությունում հաշվառված առանձնացված ստորաբաժանմանը ծառայությունների մատուցումից ստացված եկամուտներ են համարվում՝

- հաշվապահական, կառավարման, փորձագիտական, մարքեթինգային, գովազդային և համանման այլ ծառայություններից ստացված եկամուտները  
(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 51)».

13) 132-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«132. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, արտաքին տնտեսական գործունեություն է համարվում ոչ ռեզիդենտի կողմից ռեզիդենտ շահութահարկ վճարողին ապրանքի մատակարարումը, եթե այդ ապրանքի ներմուծման փաստաթղթերով՝

- հիմնավորվում է, որ ներմուծումը կատարվել է ռեզիդենտ շահութահարկ վճարողի անունով՝ անկախ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքն Արցախի Հանրապետության տարածքում փոխանցվելու հանգամանքից  
(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 53)».

14) 132-րդ հարցից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 132<sup>1</sup>-ին հարց.

«132<sup>1</sup>. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, արտաքին տնտեսական գործունեություն է համարվում՝

- ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից Արցախի Հանրապետության տարածքից դուրս ռեզիդենտին կամ մշտական հաստատության միջոցով Արցախի Հանրապետությունում գործունեություն իրականացնող այլ ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին ապրանքի մատակարարումը  
(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 53)».

15) 136-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«136. «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ ոչ ռեզիդենտը վերադաս հարկային մարմնի կողմից հաստատված ձևով տարեկան եկամուտների մասին հաշվարկը, որտեղ ներառվում են արցախյան աղբյուրներից ստացված բոլոր եկամուտները, հարկային մարմիններ է ներկայացնում՝

- հաշվետու տարվան հաջորդող ապրիլի 20-ից ոչ ուշ

(«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 58)».

16) 145-րդ հարցում «ղարաբաղյան» բառը փոխարինել «արցախյան» բառով.

17) 160-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«160. «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ նվազեցվող եկամուտ է համարվում՝

- Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով իրականացվող՝ գովազդային վիճակախաղերի մասնակիցների դրամական և իրային շահումները՝ յուրաքանչյուր շահման դեպքում 50000 ՀՀ դրամը չգերազանցող չափով, խաղարկությունով, ոչ խաղարկությունով և համակցված վիճակախաղերի մասնակիցների դրամական և իրային շահումները

(«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 6)».

18) 164-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«164. «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ ֆիզիկական անձի կողմից գրավ դրված գույքը բռնագանձման արդյունքում սեփականության իրավունքով գրավառու բանկին կամ վարկային կազմակերպությանն անցնելու դեպքում գրավատու ֆիզիկական անձի՝ գույքն օտարելուց ստացված եկամուտ է համարվում՝

- գրավ դրված գույքի օտարման գնի և վարկային պարտավորության դրական տարբերությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի

(«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 9)».

19) 165-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«165. «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ արտադատական կարգով բռնագանձման արդյունքում բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությանն անցած՝ գրավ դրված գույքի օտարումից ֆիզիկական անձին եկամուտների վճարման օր և օտարման գին են համարվում՝

- բանկի կամ վարկային կազմակերպության կողմից այդ գույքի հետագա օտարման օրը և օտարման գինը, եթե այդ օտարումը տեղի է ունեցել գույքն ի սեփականություն վերցնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում

(«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 9)».

20) 166-րդ, 167-րդ և 168-րդ հարցերում «ղարաբաղյան» բառերը փոխարինել «արցախյան» բառերով:

2. «Տնտեսական իրավունք» բաժնում՝

1) 26-32-րդ հարցերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» բառերով.

2) 146-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«146. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի՝ ձեռք բերել իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերը խորհրդի որոշմամբ՝

- այո՝, եթե դա նախատեսված է ընկերության կանոնադրությամբ

(«Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենք, հոդված 54)».

3) 183-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«183. «Մնանկության մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝

- սեփական նախաձեռնությամբ կամ պարտատիրոջ պահանջով, եթե պարտապանն անվճարունակ է

(«Մնանկության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 3)».

4) 184-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«184. «Մնանկության մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ պարտապանի հետ փոխկապակցված են համարվում՝

- պարտապանի ղեկավարը, ինչպես նաև տնօրենների խորհրդի անդամը, պարտապանի կողմից գործադիր մարմնի անդամը, գլխավոր հաշվապահը, ինչպես նաև սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելու պահից վերջին մեկ տարվա ընթացքում նշված պաշտոններից ազատված անձը

(«Մնանկության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 9)».

5) 185-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«185. «Մնանկության մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ պարտապանի սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կասեցվում են՝

- պարտապանի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեցող անձանց՝ օրենքով և պարտապանի կանոնադրությամբ սահմանված գույքի կառավարման և տնօրինմանը վերաբերող այն լիազորությունները, որոնք պայմանավորված են այդ մասնակցությամբ

(«Մնանկության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 19)».

6) 186-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«186. «Սնանկության մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանը՝  
- օրենքով սահմանված կարգով անհապաղ նշանակում է սնանկության գործով կառավարիչ՝ դադարեցնելով ժամանակավոր կառավարչի լիազորությունները  
(«Սնանկության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 29)».

7) 187-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«187. «Սնանկության մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ երբ տվյալ սնանկության գործով կառավարիչ նշանակվել է այլ անձ, ժամանակավոր կառավարչի ամսական վարձատրությունը կատարվում է պարտապանի հաշվին՝  
- վերջին տարում պարտապանի տնօրենի տարեկան վաստակի մեկ տասներկու-երորդի չափով  
(«Սնանկության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 32)».

8) 192-201-րդ հարցերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» բառերով.

9) 192-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«192. «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ Արցախի Հանրապետության բյուջետային համակարգն իրավունքի նորմերով կարգավորվող Արցախի Հանրապետության տնտեսական հարաբերությունների և Արցախի Հանրապետության պետական կառուցվածքի վրա հիմնված հետևյալ երկու մակարդակի բյուջեների ամբողջությունն է՝  
- առաջին մակարդակ՝ պետական բյուջե և երկրորդ մակարդակ՝ համայնքների բյուջեներ  
(«Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 3)».

10) 197-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«197. «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ պետական բյուջեի նախագիծը ներառում է՝  
- Արցախի Հանրապետության Նախագահի բյուջետային ուղերձը և պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը  
(«Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 17)»:

3. «Աուդիտ» բաժնում՝

1) 121-123 հարցերում «Հաղորդակցությունը կառավարման օղակներում գտնվող անձանց հետ» բառերը փոխարինել «Հաղորդակցումը կառավարման օղակներում գտնվող անձանց հետ» բառերով.

2) 121-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«121. «Հաղորդակցումը կառավարման օղակներում գտնվող անձանց հետ» ԱՄՍ 260-ի համաձայն՝ աուդիտորը կառավարման օղակներում գտնվող անձանց ամփոփ ձևով պետք է տեղեկացնի՝

- աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների մասին, այդ թվում նաև աուդիտորի կողմից հայտնաբերած նշանակալի ռիսկերի մասին

(ԱՄՍ 260, կետ 15)».

3) 255-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«255. «Կազմակերպության գործունեության անընդհատությունը» ԱՄՍ 570-ի համաձայն՝ աուդիտորի նպատակն է՝

- ձեռք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ և կատարել եզրահանգում՝ ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ

(ԱՄՍ 570, կետ 9, ենթակետ «ա»)».

4) 256-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«256. «Կազմակերպության գործունեության անընդհատությունը» ԱՄՍ 570-ի համաձայն՝ աուդիտորի նպատակն է՝

- ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա եզրահանգել, թե արդյոք առկա է դեպքերի կամ իրավիճակների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ

(ԱՄՍ 570, կետ 9, ենթակետ «բ»)».

5) 296-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«296. «Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիքի ձևավորում և ներկայացում» ԱՄՍ 700-ի համաձայն՝ աուդիտորի նպատակներն են՝

- ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա կատարած եզրահանգումների արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, և աուդիտորի գրավոր եզրակացությունում հստակ արտահայտել այդ կարծիքը

(ԱՄՍ 700, կետ 6)».

6) 297-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«297. «Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիքի ձևավորում և ներկայացում» ԱՄՄ 700-ի համաձայն՝ ընդհանուր նպատակի հիմունքները՝

- ֆինանսական հաշվետվողականության հիմունքներ են, որոնք նախագծված են բավարարելու մեծ թվով օգտագործողների՝ ֆինանսական տեղեկատվության նկատմամբ ունեցած ընդհանուր կարիքները

(ԱՄՄ 700, կետ 7)».

7) հանել 304-րդ հարցը.

8) 305-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«305. «Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիքի ձևավորում և ներկայացում» ԱՄՄ 700-ի համաձայն՝ երբ աուդիտորի եզրակացությունը հղում է կատարում և՛ աուդիտի ազգային ստանդարտներին, և՛ աուդիտի միջազգային ստանդարտներին, ապա՝

- աուդիտորի եզրակացությունում պետք է հստակ նշել, թե որ իրավահամակարգին են պատկանում աուդիտի ազգային ստանդարտները

(ԱՄՄ 700, կետ 52)».

9) հանել 306-րդ և 307-րդ հարցերը.

10) 311-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«311. «Անկախ աուդիտորական եզրակացությունում կարծիքի ձևավորում» ԱՄՄ 705-ի համաձայն՝ աուդիտորը պետք է արտահայտի կարծիքից հրաժարում, երբ՝

- նա ի վիճակի չէ կարծիքի հիմնավորման համար ձեռք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ և եզրակացնում է, որ չհայտնաբերված խեղությունների, եթե այդպիսիք կան, հնարավոր ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա կարող է լինել և՛ էական, և՛ համատարած

(ԱՄՄ 705, կետ 9)».

11) 312-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«312. «Անկախ աուդիտորական եզրակացությունում կարծիքի ձևավորում» ԱՄՄ 705-ի համաձայն՝ եթե առաջադրանքի ստանձնումից հետո աուդիտորը տեղեկանում է, որ ղեկավարությունը սահմանափակում է աուդիտի ընդգրկման շրջանակները, ինչը աուդիտորի դիտարկմամբ հավանաբար կառաջացնի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ վերապահումով կարծիք կամ կարծիքից հրաժարում արտահայտելու անհրաժեշտություն, ապա՝

- աուդիտորը պետք է պահանջի ղեկավարությունից վերացնել սահմանափակումը

(ԱՄՄ 705, կետ 11)».

12) 313-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.



«313. «Անկախ աուդիտորական եզրակացությունում կարծիքի ձևափոխում» ԱՄՍ 705-ի համաձայն՝ եթե ֆինանսական հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված են և աուդիտորի դատողության համաձայն ֆինանսական հաշվետվությունների վրա դրա ազդեցությունը էական է, բայց ոչ համատարած, աուդիտորը արտահայտում է՝  
- վերապահումով կարծիք  
(ԱՄՍ 705, կետ Ա1)».

13) 314-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«314. «Անկախ աուդիտորական եզրակացությունում կարծիքի ձևափոխում» ԱՄՍ 705-ի համաձայն՝ եթե ֆինանսական հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված են և աուդիտորի դատողության համաձայն ֆինանսական հաշվետվությունների վրա դրա ազդեցությունը էական է և համատարած, աուդիտորը արտահայտում է՝  
- բացասական կարծիք  
(ԱՄՍ 705, կետ Ա1)».

14) 315-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«315. «Անկախ աուդիտորի եզրակացությունում հանգամանքի շեշտադրում և այլ հանգամանք պարբերություններ» ԱՄՍ 706-ի համաձայն՝ եթե աուդիտորը աուդիտորի եզրակացությունում ներառում է Հանգամանքի շեշտադրում պարբերություն, ապա աուդիտորը պետք է՝  
- այդ պարբերությունում հստակ հղում կատարի լուսաբանվող հանգամանքին և նշի, որ հանգամանքի շեշտադրումը չի ձևափոխում աուդիտորի կարծիքը  
(ԱՄՍ 706, կետ 9)».

15) 316-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«316. «Անկախ աուդիտորի եզրակացությունում հանգամանքի շեշտադրում և այլ հանգամանք պարբերություններ» ԱՄՍ 706-ի համաձայն՝ Հանգամանքի շեշտադրում պարբերությունը՝  
- չի փոխարինում ԱՄՍ 705-ի համաձայն ձևափոխված կարծիքին, որը պահանջվում է աուդիտի կոնկրետ առաջադրանքի հանգամանքներից ելնելով  
(ԱՄՍ 706, կետ Ա7)».

16) 317-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«317. «Անկախ աուդիտորի եզրակացությունում հանգամանքի շեշտադրում և այլ հանգամանք պարբերություններ» ԱՄՍ 706-ի համաձայն՝ Հանգամանքի շեշտադրում պարբերությունը՝  
- չի փոխարինում ֆինանսական հաշվետվողականության կիրառելի հիմունքներով կամ ճշմարիտ ներկայացում ապահովելու նպատակով ղեկավարությունից պահանջվող ֆինանսական հաշվետվությունների բացահայտումներին  
(ԱՄՍ 706, կետ Ա7)».

17) 318-րդ հարցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«318. «Անկախ աուդիտորի եզրակացությունում հանգամանքի շեշտադրում և այլ հանգամանք պարբերություններ» ԱՄՍ 706-ի համաձայն՝ Հանգամանքի շեշտադրում պարբերությունը՝

- չի փոխարինում ԱՄՍ 570-ի համաձայն ներկայացմանը, երբ առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ

(ԱՄՍ 706, կետ Ա7)»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Գրանցված է  
Արցախի Հանրապետության արդարադատության  
նախարարության կողմից 17-ին հուլիսի 2018թ.  
Պետական գրանցման համարը 2071850

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«28» հունիսի 2018թ.

N 1-Ն

ք. Ստեփանակերտ

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻՆ ՀԱՄԱԶԳԵՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ,  
ԱՅՆ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Ոստիկանությունում ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 5-ի N 513-Ն որոշման 2-րդ կետի և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունվարի 25-ի N 34-Ն որոշմամբ հաստատված Արցախի Հանրապետության ոստիկանության կանոնադրության 15-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Սահմանել՝

1) ոստիկանության ծառայողին համազգեստ տրամադրելու կարգը և պայմանները՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ոստիկանության ծառայողի համազգեստ կրելու կարգը և պայմանները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հրամանը ծանոթացնել Արցախի Հանրապետության ոստիկանության ողջ անձնակազմին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ**

**Ի. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**  
**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻՆ ՀԱՄԱԶԳԵՍՏ ՏՐԱՄԱՂԲԷԼՈՒ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով և պայմաններով կարգավորվում են ոստիկանության ծառայողին համազգեստ տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Ոստիկանության ծառայողին համազգեստ տրամադրելը ենթադրում է ոստիկանության ծառայողին համազգեստով, տարբերանշաններով և համազգեստի մաս կազմող այլ պարագաներով, ինչպես նաև անկողնային պարագաներով և վրաններով ապահովում (այսուհետ՝ հանդերձանք):

3. Ոստիկանության ծառայողին հանդերձանքով ապահովումն իրականացվում է Արցախի Հանրապետության ոստիկանության ֆինանսատնտեսական վարչության կողմից՝ ըստ սահմանված նորմաների:

4. Ոստիկանության ֆինանսատնտեսական վարչության խնդիրներն են՝ ոստիկանության ստորաբաժանումների ծառայողներին ժամանակին և ամբողջությամբ հանդերձանքով ապահովումը, ստորաբաժանումների հանդերձանքի պահեստներում և օգտագործման մեջ եղած համազգեստի հաշվառումը, պահպանման աշխատանքների իրականացումը, ոստիկանության ծառայողների համազգեստի կարի անհատական պատվերների կազմակերպումը, ինչպես նաև արտադրանքի որակի նկատմամբ հսկողությունը:

5. Ոստիկանության ծառայողներին համազգեստը տրամադրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 5-ի «Ոստիկանության ծառայողի համազգեստի նկարագիրն ու այն կրելու ժամկետները սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 19-ի N 203-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 513-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված ժամկետներով:

6. Անձնական օգտագործման հանդերձանքի պարագաները անձնակազմին տրվում են անհատական օգտագործման համար:

7. Հանդերձանքը պատվիրվում և պահեստավորվում է կենտրոնացված կարգով՝ ոստիկանության ծառայողների թվաքանակին համապատասխան:

8. Արցախի Հանրապետության ոստիկանությունում առկա՝ սահմանված նորմերին չհամապատասխանող հանդերձանքի բաշխումը կատարվում է ըստ նպատակահարմարության:

**2. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻՆ ՀԱՄԱԶԳԵՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ  
ԿԱՐԳԸ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

9. Ոստիկանությունում նոր ստորաբաժանում կազմավորվելու դեպքում վերջինիս ծառայողներին համազգեստ տրամադրելու համար հիմք է հանդիսանում տվյալ ստորաբաժանման կազմավորման մասին համապատասխան իրավական ակտը:

10. Ոստիկանության ծառայողների հանդերձանքը բաշխվում է անհատական կարգով:

11. Ոստիկանության ծառայողին համազգեստի ուսադիրներ, տարբերանշաններ, թևքանշաններ և համազգեստի մաս կազմող այլ պարագաներ հատկացվում են հասանելիք համազգեստի հետ միասին:

12. Բարձրագույն խմբի կոչում ստացած ոստիկանության ծառայողները ապահովվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 5-ի «Ոստիկանության ծառայողի համազգեստի նկարագիրն ու այն կրելու ժամկետները սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 19-ի N 203-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 513-Ն որոշման N 2 հավելվածի 1-ին նորմայով նախատեսված համազգեստի ողջ լրակազմով:

13. Ոստիկանության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբի կոչումներ ունեցող ոստիկանության ծառայողները ոստիկանությունում ծառայություն անցնելիս անմիջապես ստանում են ամենօրյա և տոնական համազգեստների ողջ լրակազմը:

14. Այլ պետությունների ոստիկանության ուսումնական հաստատություններ գործուղված սովորողների հանդերձանքի ապահովումն իրականացվում է Արցախի Հանրապետության ոստիկանության համար նախատեսված նորմաներով՝ հաշվի առնելով տվյալ պետության բնակլիմայական առանձնահատկությունները:

**ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ  
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԱՄԱԶԳԵՍՏ ԿՐԵԼՈՒ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով և պայմաններով կարգավորվում են ոստիկանության ծառայողի համազգեստ կրելու հետ կապված հարաբերությունները:

2. Ծառայության ընթացքում ոստիկանության ծառայողները շնորհիվ կոչմանը համապատասխան կրում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 5-ի «Ոստիկանության ծառայողի համազգեստի նկարագիրն ու այն կրելու ժամկետները սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 19-ի N 203-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 513-Ն որոշմամբ սահմանված նկարագրի համազգեստ, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտություն է առաջանում ծառայության ժամանակ կրելու քաղաքացիական հագուստ:

3. Ոստիկանության ծառայողների համազգեստը դասակարգվում է տոնական, ամենօրյա և արտաքին ծառայություն իրականացնելու համար նախատեսված, ինչպես նաև ամառային և ձմեռային տեսակների:

4. Տոնական համազգեստը կրում են՝

- 1) երդման արարողության.
- 2) ոստիկանության ստորաբաժանումներին դրոշներ հանձնելու.
- 3) պատվո պահակի կազմի մեջ ընդգրկվելու.
- 4) պետական պարզներ ստանալու.
- 5) պաշտոնի նշանակման և կոչում շնորհելու դեպքերում՝ դեկավարներին ներկայանալու.

6) ոստիկանության ծառայողների մասնակցությամբ պաշտոնական միջոցառումների անցկացման ժամանակ.

7) տոների և հիշատակի օրերին՝ ծառայությունից դուրս:

5. Արտաքին ծառայություն իրականացնելու համար նախատեսված համազգեստը կրում են՝

- 1) պարեկային ծառայության մեջ գտնվելիս.
- 2) ծառայողական հատուկ խնդիրներ կատարելիս.
- 3) հերթապահությունների և ծառայողական պարապմունքների ժամանակ:

6. Սույն կարգի 4-րդ և 5-րդ կետերով չնախատեսված մյուս բոլոր դեպքերում ոստիկանության ծառայողները կրում են ամենօրյա համազգեստ:

7. Համազգեստի տեսակը որոշվում է ոստիկանության ստորաբաժանման ղեկավարի կողմից՝ ելնելով տվյալ ստորաբաժանման տեղակայման վայրից և իրականացվող խնդիրների բնույթից:

8. Շարային երթի, ստուգատեսների, խորհրդակցությունների և ծառայողական պարապմունքների ժամանակ ոստիկանության ծառայողների համազգեստի տեսակը որոշվում է դրանք անցկացնողների կողմից:

9. Ոստիկանության ծառայողների առանձին խմբեր զինվորական նմուշի համազգեստ կրելիս ղեկավարվում են Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի կողմից տվյալ համազգեստը կրելու համար սահմանված կարգով և նորմաներով:

10. Ոստիկանության ծառայողներին չի թույլատրվում կրել.

1) չսահմանված նմուշի համազգեստի պարագաներ, տարբերանշաններ և կրծքանշաններ.

2) միաժամանակ ամենօրյա, տոնական և արտաքին ծառայության համար նախատեսված համազգեստների պարագաները՝ բացառությամբ սույն կարգով նախատեսված հատուկ դեպքերի.

3) գունաթափ կամ կեղտոտված փողկապներ.

4) կեղտոտ, վնասված վերնամասով, մաշված կրունկներով կամ ոլորված սրնքակալներով կոշիկներ.

5) համազգեստ՝ քաղաքացիական հագուստի հետ համատեղ:

## **2. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻՆ ՏՐԱՄԱՂԻՎՈՂ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՏԵՄԱԿՆԵՐԸ**

11. Ոստիկանության ծառայողները կրում են՝

1) տոնական համազգեստ.

ա. ամառային՝ գլխարկ տոնական, տարազաբաճկոն և տաբատ մուգ փիրուզագույն, վերնաշապիկ սպիտակ՝ սև փողկապով, սև կոշիկներ,

բ. ձմեռային՝ գլխարկ ականջակալներով, մորթե (բարձրագույն խմբի կոչում ունեցողների համար՝ կարակուլե), վերարկու մուգ փիրուզագույն (բարձրագույն խմբի կոչում ունեցողների համար՝ կարակուլե օձիքով), կիսավերարկու մորթե օձիքով, տարազաբաճկոն և տաբատ մուգ փիրուզագույն, սպիտակ վերնաշապիկ՝ սև փողկապով, սև կոշիկներ կամ կիսաձտքավոր կոշիկներ, սպիտակ ձեռնոցներ, սպիտակ վզպատ թաշկինակ.

2) ամենօրյա համազգեստ.

ա. ամառային՝ գլխարկ, մուգ փիրուզագույն տարազաբաճկոն և տաբատ, վերնաշապիկ (մոխրաերկնագույն/սպիտակ), մուգ փիրուզագույն փողկապ, սև կոշիկներ կամ կիսաձտքավոր կոշիկներ,

բ. ձմեռային՝ գլխարկ ականջակալներով մորթե (բարձրագույն խմբի կոչումներ ունեցողների համար՝ կարակուլե), վերարկու մուգ փիրուզագույն (բարձրագույն խմբի կոչում ունեցողների համար՝ կարակուլե օձիքով), կիսավերարկու մորթե օձիքով, մուգ փիրուզագույն տարազաբաճկոն և տաբատ, սվիտեր, մոխրաերկնագույն կամ սպիտակ վերնաշապիկ՝ մուգ փիրուզագույն փողկապով, սև կոշիկներ կամ կիսաձտքավոր կոշիկներ, սև ձեռնոցներ, մուգ փիրուզագույն վզպատ թաշկինակ.

3) արտաքին ծառայություն իրականացնելու համար նախատեսված համազգեստ.

ա. ամառային՝ գլխարկ կեպի (ոստիկանության հատուկ նշանակության ստորաբաժանումներում՝ սպորտային գլխարկ), կիսաբամբակյա բաճկոն և տաբատ՝ մուգ փիրուզագույն, ճանապարհապարեկային ծառայողների համար երկուական

լուսասանդրադարձնող ժապավեններ, մոխրաերկնագույն վերնաշապիկ (շապիկ), մուգ փիրուզագույն փողկապ, սև գոտի, սև կոշիկներ կամ կիսաձտքավոր կոշիկներ,

բ. ձմեռային՝ գլխարկ ականջակալներով (ոչխարի մորթուց՝ գլխավոր, ավագ և միջին խմբի կոշումներ ունեցողների համար և արհեստական մորթուց՝ կրտսեր խմբի կոշումներ ունեցողների համար), կիսավերարկու մորթե օձիքով, ճանապարհապարեկային ծառայողների համար երկուական լուսասանդրադարձնող ժապավեններ, մուգ փիրուզագույն տարազաբաճկոն և տաբատ, սվիտեր, մոխրաերկնագույն վերնաշապիկ, սև գոտի, սև կոշիկներ կամ կիսաձտքավոր կոշիկներ, սև ձեռնոցներ, մուգ փիրուզագույն վզպատ թաշկինակ:

12. Ոստիկանության ծառայողները կարող են կրել.

1) ձմեռային, ամենօրյա և տոնական համազգեստների հետ ականջակալներով գլխարկի փոխարեն մուգ փիրուզագույն կիսաբրդյա գլխարկ.

2) արտաքին ծառայության համար նախատեսված ձմեռային համազգեստի դեպքում՝ տաք եղանակներին ականջակալներով մորթուց գլխարկի փոխարեն կիսաբրդյա գլխարկ, մորթե օձիքը հանված կիսավերարկուի հետ.

3) ամառային ամենօրյա համազգեստի դեպքում՝ մուգ փիրուզագույն կեպի, մոխրաերկնագույն (սպիտակ) վերնաշապիկի հետ առանց տարազաբաճկոնի.

4) ձմեռային ամենօրյա համազգեստի դեպքում՝ ձմեռային մուգ փիրուզագույն կիսավերարկու, մուգ փիրուզագույն վզպատ թաշկինակի հետ.

5) ամառային ամենօրյա համազգեստի դեպքում՝ տարազաբաճկոնի փոխարեն կիսաբրդյա մուգ փիրուզագույն բաճկոն (գլխարկի կամ կեպիի հետ).

6) ամառային ամենօրյա առանց տարազաբաճկոնի համազգեստի դեպքում՝ սպիտակ և մոխրաերկնագույն վերնաշապիկ, ուսադիրներով (երկար թևքերովը՝ փողկապով, կարճ թևքերովը՝ առանց փողկապի).

7) արտաքին ծառայության համար նախատեսված համազգեստի դեպքում՝ առանց կիսաբաժնաբաճկոնի, տաբատով, սպիտակ կամ մոխրաերկնագույն վերնաշապիկ ուսադիրներով (երկար թևքերովը՝ փողկապով, կարճ թևքերովը՝ առանց փողկապի).

8) անձրևային եղանակներին՝ ամենօրյա, տոնական և արտաքին ծառայության համար նախատեսված համազգեստների դեպքում՝ մուգ փիրուզագույն թիկնոց-ուսնոց:

### **3. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՆ ԾԱՌԱՅՈՂԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՏԵՄԱԿՆԵՐԸ**

13. Ոստիկանության կին ծառայողները կրում են տոնական համազգեստի հետևյալ տեսակները.

1) ամառային՝ գլխարկ, կիսաշրջազգեստ մուգ փիրուզագույն, վերնաշապիկ սպիտակ՝ սև փողկապով, սև կոշիկներ, գուգագուլպա (գուլպա).

2) ձմեռային՝ գլխարկ ականջակալներով, մուգ փիրուզագույն կիսավերարկու՝ մորթե օձիքով, տարազաբաճկոն, մուգ փիրուզագույն կիսաշրջազգեստ, սվիտեր, վերնաշապիկ սպիտակ՝ սև փողկապով, կոշիկներ սև գույնի, կամ կիսաձտքավոր կոշիկներ, գուգագուլպա (գուլպա), սև ձեռնոցներ, սպիտակ վզպատ թաշկինակ:

14. Ոստիկանության կին ծառայողները կրում են ամենօրյա համազգեստի հետևյալ տեսակները.



1) ամառային՝ գլխարկ, մուգ փիրուզագույն կիսաշրջագգեստ, վերնաշապիկ մոխրաերկնագույն (սպիտակ), փողկապ մուգ փիրուզագույն, սև կոշիկներ, զուգագուլպա.

2) ձմեռային՝ գլխարկ ականջակալներով, մուգ փիրուզագույն կիսավերարկու՝ մորթե օձիքով, մուգ փիրուզագույն տարագաբաճկոն, կիսաշրջագգեստ կամ տաբատ, սվիտեր, վերնաշապիկ մոխրաերկնագույն (սպիտակ), փողկապ մուգ փիրուզագույն, կոշիկներ սև գույնի կամ կիսաճտքավոր կոշիկներ, զուգագուլպա (գուլպա), սև ձեռնոցներ, մուգ փիրուզագույն վզպատ թաշկինակ:

15. Ոստիկանության կին ծառայողները կրում են արտաքին ծառայության համար նախատեսված համազգեստի հետևյալ տեսակները.

1) ամառային՝ գլխարկ, բաճկոն, տաբատ, վերնաշապիկ մոխրաերկնագույն, փողկապ մուգ փիրուզագույն, կոշիկ կամ կիսաճտքավոր կոշիկ՝ սև.

2) ձմեռային՝ գլխարկ ականջակալներով, կիսավերարկու մուգ փիրուզագույն, տաբատ կիսաբրդյա, սվիտեր, վերնաշապիկ մոխրաերկնագույն՝ մուգ փիրուզագույն փողկապով, կոշիկ կամ կիսաճտքավոր կոշիկ՝ սև, սև ձեռնոցներ, վզպատ թաշկինակ՝ մուգ փիրուզագույն:

16. Ոստիկանության կին ծառայողները կարող են կրել.

1) ձմեռային ամենօրյա և տոնական համազգեստի դեպքում՝ ականջակալներով գլխարկի փոխարեն կիսաբրդյա գլխարկ,

2) արտաքին ծառայության համար նախատեսված ձմեռային համազգեստի դեպքում՝ ականջակալներով մորթուց գլխարկի փոխարեն կիսաբրդյա գլխարկ, մորթե օձիքը հանված կիսավերարկուի հետ,

3) ամառային ամենօրյա համազգեստի դեպքում՝ մուգ փիրուզագույն կիսաբրդյա բաճկոն, գլխարկով,

4) ամառային ամենօրյա համազգեստի դեպքում՝ սպիտակ կամ մոխրաերկնագույն վերնաշապիկ (երկար թևքերովը՝ փողկապով, կարճ թևքերովը՝ առանց փողկապի),

5) արտաքին ծառայության համար նախատեսված համազգեստի դեպքում՝ առանց կիսաբրդյա բաճկոնի, սպիտակ կամ մոխրաերկնագույն վերնաշապիկ (երկար թևքերովը՝ փողկապով, կարճ թևքերովը՝ առանց փողկապի),

6) անձրևային եղանակներին՝ մուգ փիրուզագույն թիկնոց-ուսնոց:

#### **4. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱԶԳԵՍՏ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

17. Ականջակալներով գլխարկը, ամենօրյա գլխարկը կրում են ուղիղ, առանց թեքելու: Ականջակալներով գլխարկի ներքևի եզրը պետք է լինի 2-4 սանտիմետր հոնքերից վերև:

18. Բարձրագույն խմբի կոչում ունեցող ծառայողները կրում են արծաթագոծ թելերով ասեղնագործված դափնե ճյուղերով, փոքր գլխարկանշանով և զինանշանով բրդյա գլխարկ: Ոստիկանության մյուս ծառայողները՝ արծաթագույն մեծ գլխարկանշանով գլխարկ:

19. Ականջակալներով գլխարկը կրում են արծաթագույն փոքր գլխարկանշանով:

20. Գլխարկանշանի կենտրոնը՝ գլխարկանշանի և խորհրդանշանի միջնագիծը պետք է գտնվեն քթարմատի վերևում:

21. Ականջակալներով գլխարկը՝ ականջակալներն իջեցրած, կրում են օդի -10 աստիճան ցելսիուս և ավելի ցածր ջերմաստիճանների դեպքում, կոճկված դնչափոկով՝

ուժեղ քանու դեպքում: Իջեցված ականջակալների քուղերը կապվում են կզակի տակ, բարձրացված ականջակալների դեպքում՝ իրար կապված քուղերի ծայրերը պահվում են ականջակալների տակ:

22. Գլխից հանված գլխարկը պահում են ձախ իջեցրած ազատ ձեռքում: Ականջակալներով գլխարկը պահում են գլխարկանշանով դեպի առաջ, ականջակալներով գլխարկի ներքևի ծայրը ուղղված դեպի ծառայողի ոտքի կողմը:

23. Ձմեռային վերարկուն կրում են բոլոր կոճակները կոճկված: Ձմեռային վերարկուի երկարությունը պետք է լինի ծնկից 15 սանտիմետր վերև:

24. Կիսաշրջագետի երկարությունը՝ ծնկից:

25. Մորթե օձիքով ձմեռային կիսավերարկուն կրում են կափույրով ծածկվող շղթան մինչև վերջ բարձրացված:

26. Թիկնոց-ուսնոցը անձրևային եղանակին կրում են բոլոր կոճակները կոճկված, գլխանոցով կամ առանց դրա՝ ամառային կամ ձմեռային հագուստի պարագաների վրայից: Թիկնոց-ուսնոցը թույլատրվում է կրել ուսագոտու վրա գլանափաթեթավորված, կամ երեսով դեպի դուրս խնամքով ծալված՝ ձախ ձեռքում:

27. Տարագաբաճկոնը կրում են բոլոր կոճակները կոճկված:

28. Կիսաբրդյա բաճկոնը կրում են շղթան մինչև վերին կտրվածքը բարձրացված: Ցուրտ եղանակին շղթան բարձրացվում է մինչև վերջ:

29. Կիսաբամբակյա տաբատը կրում են կիսաձոքավոր կոշիկների մեջ՝ ոչ ձիգ վիճակում տեղավորված, իսկ կիսաբրդյա տաբատը կրում են կոշիկների վրա իջեցված:

30. Ամառային կիսաբամբակյա բաճկոնը կրում են օձիքի կոճակը արձակված վիճակում:

31. Երկարաթևք վերնաշապիկները կրում են բոլոր կոճակները կոճկված, ուսադիրներով և փողկապով, իսկ կարճաթևք վերնաշապիկները՝ առանց փողկապի, ուսադիրներով, վերևի կոճակը արձակված: Վերնաշապիկի օձիքը հետևից պետք է լինի տարագաբաճկոնի օձիքի վերին ծայրին հավասար կամ նրանից բարձր ոչ ավելի, քան 0,5 սանտիմետր:

32. Սվիտերը կրում են ձմեռային վերարկուի, կիսավերարկուի հետ (շենքերի ներսում՝ ուսադիրներով):

33. Տաբատները պետք է ունենան երկայնակի արդուկված ծալքեր: Վերարկուի, տարագաբաճկոնի, բաճկոնների և վերնաշապիկի գրպանների կափույրները պետք է լինեն դուրս հանված:

34. Վզպատ թաշկինակը կրում են վերարկուի, ձմեռային կիսավերարկուի օձիքի տակ խնամքով ծալված: Վզպատ թաշկինակի վերին եզրը պետք է հավասարաչափ երևա օձիքի տակից 1-2 սանտիմետր:

35. Ձեռնոցները կրում են ձմեռային հագուստի հետ: Պատիվ տալուց ձեռնոցները չեն հանում:

36. Ոստիկանության ծառայողները կրում են սահմանված նմուշի սև կոշիկ և կիսաձոքավոր կոշիկ: Կիսաձոքավոր կոշիկները կրում են կոշկեքաշերը խնամքով քողակապված վիճակում:

37. Ոստիկանության կին ծառայողները կրում են սև, մարմնագույն կամ մոխրագույն գուգագուլպաներ, գուլպաներ:

38. Գոտին կրում են այնպես, որ նրա ճարմանդը առջևից գտնվի մեջտեղում:

39. Դաշտային պայուսակը կրում են հագուստի վրայից՝ գոտու վրա:

40. Փողկապը վերնաշապիկին ամրացնում են սահմանված նմուշի արծաթագույն ամրակով՝ վերևից երրորդ և չորրորդ կոճակների միջև:

41. Ոստիկանության ծառայողները կարող են կրել.

1) առանց տարազաբաճկոնի (բաճկոնի) ուսադիրներով և փողկապով վերնաշապիկներ՝ ամառային ամենօրյա համազգեստի դեպքում, իսկ շենքերի ներսում՝ տարվա ցանկացած եղանակին.

2) առանց տարազաբաճկոնի (բաճկոնի), առանց փողկապի, ուսադիրներով, վերին կոճակը արձակված կարճ թևքերով վերնաշապիկներ՝ ամառային ամենօրյա համազգեստի դեպքում՝ օղի +20 աստիճան ցելսիուս և բարձր ջերմաստիճանի ժամանակ:

##### **5. ՈՒՍԱԴԻՐՆԵՐ, ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐ, ԿՐԾՔԱՆՇԱՆՆԵՐ ԵՎ ԹԵՎՔԱՆՇԱՆՆԵՐ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

42. Ոստիկանության ծառայողները համազգեստի և հատուկ հանձնարարություններ կատարելու համար նախատեսված հագուստի վրա կրում են ուսադիրներ.

1) կարվող՝ ձմեռային վերարկուի, տարազաբաճկոնի, բաճկոնի վրա,

2) հանվող՝ կիսավերարկուի և վերնաշապիկի վրա:

43. Կարվող և հանվող ուսադիրների վրա ուսադրի վերին ծայրից 15 միլիմետր հեռավորության վրա տեղադրվում է արծաթագույն կոճակ, իսկ երեսի կտորից կարված ուսադիրներին արծաթագույն կոճակը տեղադրվում է 10 միլիմետր հեռավորության վրա:

44. Ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբի կոչումներ ունեցող ծառայողների ուսադիրների վրա աստղերի քանակը և դիրքը համապատասխանաբար որոշվում է՝

1) գեներալ-գնդապետի կոչում ունեցողների համար աստղերի թիվը՝ երեք, աստղերի տրամագիծը 22 միլիմետր, հեռավորությունը ուսադրի ներքին ծայրից մինչև առաջին աստղի կենտրոնը 25 միլիմետր, հեռավորությունը աստղերի կենտրոնների միջև ուսադրի երկայնքով՝ 25 միլիմետր,

2) գեներալ-լեյտենանտի կոչում ունեցողների համար աստղերի թիվը՝ երկու, աստղերի տրամագիծը 22 միլիմետր, հեռավորությունը ուսադրի ներքին ծայրից մինչև առաջին աստղի կենտրոնը 25 միլիմետր, հեռավորությունը աստղերի կենտրոնների միջև ուսադրի երկայնքով՝ 25 միլիմետր,

3) գեներալ-մայորի կոչում ունեցողների համար աստղերի թիվը՝ մեկ, աստղերի տրամագիծը՝ 22 միլիմետր, հեռավորությունը ուսադրի ներքին ծայրից մինչև աստղի կենտրոնը՝ 50 միլիմետր,

4) գնդապետի կոչում ունեցողների համար աստղերի թիվը՝ երեք, աստղերի տրամագիծը՝ 22 միլիմետր, հեռավորությունը ուսադրի ներքին ծայրից մինչև առաջին աստղի կենտրոնը՝ 30 միլիմետր, հեռավորությունը աստղերի կենտրոնների միջև ուսադրի երկայնքով՝ 25 միլիմետր,

5) փոխգնդապետի կոչում ունեցողների համար աստղերի թիվը՝ երկու, աստղերի տրամագիծը 20 միլիմետր, հեռավորությունը ուսադրի ներքին ծայրից մինչև առաջին աստղի կենտրոնը 30 միլիմետր,

6) մայորի կոչում ունեցողների համար աստղերի թիվը՝ մեկ, աստղերի տրամագիծը 20 միլիմետր, հեռավորությունը ուսադրի ներքին ծայրից մինչև աստղի կենտրոնը 45 միլիմետր,

7) կապիտանի կոչում ունեցողների համար աստղերի թիվը՝ չորս, աստղերի տրամագիծը 13 միլիմետր, հեռավորությունը ուսադրի ներքին ծայրից մինչև առաջին աստղի կենտրոնը 30 միլիմետր, հեռավորությունը աստղերի կենտրոնների միջև ուսադրի երկայնքով 25 միլիմետր,

8) ավագ լեյտենանտի կոչում ունեցողների համար աստղերի թիվը՝ երեք, աստղերի տրամագիծը 13 միլիմետր, հեռավորությունը ուսադրի ներքին ծայրից մինչև առաջին աստղի կենտրոնը 30 միլիմետր, հեռավորությունը աստղերի կենտրոնների միջև ուսադրի երկայնքով 25 միլիմետր,

9) լեյտենանտի կոչում ունեցողների համար աստղերի թիվը՝ երկու, աստղերի տրամագիծը 13 միլիմետր, հեռավորությունը ուսադրի ներքին ծայրից մինչև առաջին աստղի կենտրոնը 30 միլիմետր,

10) ավագ ենթասպայի կոչում ունեցողների համար աստղերի թիվը՝ երեք, աստղերի տրամագիծը 13 միլիմետր, հեռավորությունը ուսադրի ներքին ծայրից մինչև առաջին աստղի կենտրոնը 30 միլիմետր, հեռավորությունը աստղերի կենտրոնների միջև ուսադրի երկայնքով 25 միլիմետր,

11) ենթասպայի կոչում ունեցողների համար աստղերի թիվը՝ երկու, աստղերի տրամագիծը 13 միլիմետր, հեռավորությունը ուսադրի ներքին ծայրից մինչև առաջին աստղի կենտրոնը 30 միլիմետր, հեռավորությունը աստղերի կենտրոնների միջև ուսադրի երկայնքով 25 միլիմետր:

45. Ոստիկանության ծառայողների ուսադիրների վրա աստղերը համապատասխանաբար տեղադրվում են՝

1) կարվող և հանվող ուսադիրների վրա՝

ա. գնդերալի կոչում ունեցողների համար՝ երկայնակի առանցքի գծի վրա.

բ. գնդապետի կոչում ունեցողների համար՝ երկու ներքևի աստղերը մակաշերտերի վրա, երրորդը՝ առաջին երկուսից վերև երկայնակի առանցքային գծի վրա.

գ. փոխգնդապետի կոչում ունեցողների համար՝ մակաշերտերի վրա.

դ. մայորի կոչում ունեցողների համար՝ երկայնակի առանցքային գծի վրա.

ե. կապիտանի կոչում ունեցողների համար՝ երկու ներքևի աստղերը՝ ուսադրի եզրերի և մակաշերտի միջև, երրորդը՝ մակաշերտի վրա առաջին երկուսից վերև.

զ. ավագ լեյտենանտի կոչում ունեցողների համար՝ երկու ներքևի աստղերը՝ ուսադրի եզրերի և մակաշերտի միջև, երրորդ աստղը՝ մակաշերտի վրա առաջին երկուսից վերև.

է. լեյտենանտի կոչում ունեցողների համար՝ մեկական աստղ ուսադրի ծայրերի և մակաշերտի միջև.

ը. ավագ ենթասպայի, ենթասպայի կոչում ունեցողների համար՝ երկայնակի առանցքային գծի վրա.

2) ներկարված ուսադիրների համար՝

ա. գնդապետի, ավագ լեյտենանտի կոչում ունեցողների համար՝ երկու ներքևի աստղերը երկայնակի առանցքային գծի երկու կողմերում, կողքերից և առանցքային գծից հավասար հեռավորության վրա, երրորդը՝ առաջին երկուսից վերև երկայնակի առանցքային գծի վրա.

բ. մայորի, ավագ ենթասպայի, ենթասպայի կոչում ունեցողների համար՝ երկայնակի առանցքային գծի վրա.

գ. կապիտանի կոչում ունեցողների համար՝ երկու ներքևի աստղերը երկայնակի առանցքային գծի երկու կողմերում, կողքերից և առանցքային գծից հավասար հեռավորության վրա, երրորդը և չորրորդը՝ առաջին երկուսից վերև՝ երկայնակի առանցքային գծի վրա:

46. Ոստիկանության կրտսեր խմբի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա (բացի ենթասպաներից) տեղադրվում են արծաթագույն նշաքուղեր՝

1) ավագի կոչում ունեցողների համար նշաքուղերի քանակը՝ մեկ երկայնակի, լայնությունը՝ 20 միլիմետր.

2) ավագ սերժանտի կոչում ունեցողների համար նշաքուղերի քանակը՝ մեկ լայնակի, լայնությունը՝ 20 միլիմետր.

3) սերժանտի կոչում ունեցողների համար նշաքուղերի քանակը՝ երեք լայնակի, լայնությունը՝ 10 միլիմետր.

4) կրտսեր սերժանտի կոչում ունեցողների համար նշաքուղերի քանակը՝ երկու լայնակի, լայնությունը՝ 10 միլիմետր:

47. Նշաքուղերը տեղադրվում են հետևյալ կարգով՝ ավագ սերժանտի, սերժանտի, կրտսեր սերժանտի ուսադիրների վրա՝ 40 միլիմետր հեռավորության վրա ներքևի ծայրից մինչև առաջին լայնակի նշաքուղը: Հաջորդ լայնակի նշաքուղերը սերժանտի և կրտսեր սերժանտի կոչում ունեցողների ուսադիրների վրա տեղադրվում են առաջինից 2 միլիմետր հեռավորությամբ, ավագի կոչում ունեցողների ուսադիրների մեջտեղում տեղադրվում է երկայնակի արծաթագույն շերտագիծ, իսկ ավագի կոչում ունեցողների ներկարված ուսադիրի մեջտեղում տեղադրվում է մետաղյա թիթեղ 45 միլիմետր հեռավորությամբ՝ ուսադիրի ներքևի ծայրից 10 միլիմետր հեռավորության վրա:

48. Ոստիկանության բարձրագույն խմբի կոչումներ ունեցող ծառայողների ձմեռային վերարկուի և գարնանային-աշնանային վերարկուի օձիքների անկյուններում ամրացվում են արծաթագույն տարբերանշաններ (դափնե ճյուղեր):

49. Արծաթագույն տարբերանշանները համազգեստի վրա տեղադրվում են օձիքի ծայրի կիսանջատ հատվածին զուգահեռ այնպես, որ ներքևի ծայրը համընկնի օձիքի ծայրի հետ (չծածկելով օձիքի եզրաքուղը), իսկ արծաթագույն տարբերանշանի արտաքին կողմերը ձմեռային վերարկուի վրա հպվի օձիքի ներսի հարթակին՝ 10 միլիմետր հեռավորության վրա օձիքի ծայրի կիսանջատ հատվածից:

50. Տարազաբաճկոնների օձիքների անկյուններում տեղադրվում են արծաթագույն ասեղնագործված դափնե ճյուղեր:

51. Մետաղյա խորհրդանշանները ամրացվում են տարազաբաճկոնների, գարնանային-աշնանային և ձմեռային (առանց մորթե օձիքի) վերարկուների օձիքի վրա, օձիքի անկյան կիսորդի ուղղությամբ 30 միլիմետր հեռավորության վրա, ձմեռային և գարնանային-աշնանային վերարկուների վրա (բացի բարձրագույն խմբի կոչում ունեցողների) 35 միլիմետր հեռավորության վրա օձիքի անկյունից մինչև խորհրդանշանի կենտրոնը, ընդ որում՝ խորհրդանշանի համաչափության ուղղահայաց առանցքը պետք է զուգահեռ լինի օձիքի կիսանջատ հատվածին:

52. Գնդապետների, փոխգնդապետների, մայորների համազգեստի վրա տեղադրվում է նույն խորհրդանշանը եռագույն դրոշի պատկերով:

53. «Ճանապարհային ոստիկան» կրծքանշանը կրում են կրծքավանդակի ձախ կողմում: Տարազաբաճկոնների վրա կրծքանշանը ամրացվում է ձախ գրպանի վրա: Եթե տարազաբաճկոնի և բաճկոնի վրա առկա են շքանշանների ժապավեններ և մեդալների շերտաձողիկներ՝ նշանը ամրացվում է դրանցից 10 միլիմետր ներքև,

ձմեռային կիսավերարկուի վրա՝ ուսադրի ներքևի եզրից 90 միլիմետր հեռավորության վրա և շղթայից 120 միլիմետր դեպի ձախ:

54. Արցախի Հանրապետության ոստիկանության բոլոր ծառայողները համազգեստի ձախ թևքին, ուսակարից 80 միլիմետր ներքև, կրում են Արցախի Հանրապետության ոստիկանությունը խորհրդանշող թևքանշան, որից վերև մուգ փիրուզագույն առանձին կտորի վրա ամրացվում է կիսաշրջանաձև ասեղնագործված «POLICE» բառը:

55. Ոստիկանության ճանապարհային ոստիկանության ծառայողների համազգեստի աջ թևքին, ուսակարից 80 միլիմետր ներքև, կրում են իրենց ծառայությունը խորհրդանշող թևքանշան:

## **6. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ, ՄԵՂԱԼՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՆԵՐԻ ԴԱՍՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

56. Շքանշանները, մեդալները, շքանշանների ժապավենները և շերտաձողիկների վրա ամրացված մեդալների ժապավենները, մյուս տարբերանշանները դասավորվում են համազգեստի վրա, պահպանելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) պետական պարգևները տեղադրվում են պետական պարգևների և պարգևանշանների կրման կարգի համաձայն, հետևյալ հերթականությամբ՝ Արցախի Հանրապետության պետական պարգևներ, Հայաստանի Հանրապետության պետական պարգևներ, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պետական պարգևներ, գերատեսչական նշանակության մեդալներ և **օտարերկրյա պարգևներ**: Գերատեսչական մեդալների և կրծքանշանների կրման առանձնահատկությունները նշվում է նրանց նկարագրում.

2) տոնական տարազաբաճկոնի վրա շքանշանները և մեդալները կրծքավանդակի ձախ կողմում տեղաբաշխվում են հորիզոնական շարքով կրծքավանդակի կենտրոնից դեպի դուրս, կրծքավանդակի ուղղահայաց առանցքին համաչափ դարձածալի անկյունից 70 միլիմետր ներքև, դարձածալի եզրից 10 միլիմետր հեռավորության վրա: Եթե շքանշանները և մեդալները չեն տեղավորվում մեկ շարքի վրա, ապա տեղափոխվում են երկրորդ և հաջորդ շարքերը, առաջին շարքից ներքև.

3) շքանշանները և մեդալները կրծքավանդակի աջ կողմում տեղադրվում են հորիզոնական շարքով կրծքավանդակի կենտրոնից դեպի դուրս: Առաջին շարքում չտեղավորվող շքանշանները և մեդալները տեղափոխվում են երկրորդ շարք, շարքով դասավորված շքանշանների պայմանական առանցքները պետք է լինեն միևնույն մակարդակի վրա.

4) հեռավորությունը շքանշանների (մեդալների) շարքերի միջև՝ 10 միլիմետր, շքանշանների (մեդալների) միջև՝ 5-10 միլիմետր.

5) վահանակով ամրացվող շքանշանները, մեդալները և պարգևանշանները տեղադրվում են աջ կողմում.

6) շքանշանների ժապավենները և մեդալների ժապավենները շերտաձողի վրա տեղադրվում են ձախ կողմում հորիզոնական շարքով կրծքավանդակի կենտրոնից դեպի դուրս, գրպանի ուղղահայաց առանցքին համաչափ: Շարքում տեղադրվում են չորս ժապավեններից ոչ ավելին: Մեկ շարքում չտեղավորվող ժապավենները տեղափոխվում են երկրորդ, երրորդ և չորրորդ շարքերը: Ընդ որում՝ վերջին շարքի շերտաձողի ներքևի ծայրը պետք է լինի գրպանի կափույրի վերին ծայրի մակարդակին: Ավելի քան 16 շքանշանների և մեդալների դեպքում կրում են միայն առավել բարձր կարգավիճակի

շքանշանների և մեդալների ժապավենները: Շքանշանների և մեդալների ժապավենների հետ միասին շերտաձողի բարձրությունը պետք է կազմի 8 միլիմետր:

7) Արցախի Հանրապետության «Պատվավոր կոչումների» կրծքանշանները տեղադրվում են դարձածալից 10 միլիմետր աջ այնպես, որ նշանի շերտաձողի ներքևի ծայրը լինի օձիքի անկյան մակարդակին, իսկ շքանշանների (մեդալների) առկայության դեպքում՝ նրանցից վերև:

8) «Ոստիկանության պատվավոր ծառայող» և «Գերագանց ծառայության համար» կրծքանշանները տեղադրվում են դարձածալից աջ՝ ուսումնական հաստատության ավարտական կրծքանշանից առաջ:

9) համազգեստի վրա կրելու թույլատրված կրծքանշանները տեղադրվում են կրծքավանդակի աջ կողմում հորիզոնական մեկ շարքով՝ կրծքավանդակի կենտրոնից դեպի դուրս գրպանի ուղղահայաց առանցքին համաչափ: Մյուս կրծքանշանները տեղադրվում են գրպանի կափույրի ներքևի եզրից, հավասար հեռավորության վրա, ընդ որում՝ դրանց թիվը պետք է լինի երեք նշանից ոչ ավելին: Մեկ նշանի դեպքում այն տեղադրվում է գրպանի կենտրոնում, երկուսի դեպքում՝ ծայրերին, երեքի դեպքում՝ հորիզոնական շարքով:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» հուլիսի 2018 թվականի

N 36-Ս

ք. Ստեփանակերտ

**«ԷԼԻՏ ՀԻՂՐՈ» ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ԷԼԻՏ» ՓՈՔԻ ՀԻՂՐՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՑԱՆՈՒՄ  
ԷԼԵԿՏՐՈԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ  
ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետը, 17-19-րդ, 29-րդ հոդվածները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «ԷԼԻՏ ՀԻՂՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի հուլիսի 19-ի հայտը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը

**ո ր ո շ ու մ է.**

1. «ԷԼԻՏ ՀԻՂՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Նոր Խարխատիուտ, Նոր Կարաչինար և Քնարավան համայնքների վարչական տարածքներում՝ Թարթառ գետի ձախ վտակ Լև գետի 1829 մետրից (Լև գետի վտակներ՝ Ակ գետի 1681 մետր և Կող գետի 1682 մետր գետահատվածքներ) 1436,5 մետր գետահատվածքներում (բնական ջրահոսք)՝ «ԷԼԻՏԵ փոքր հիդրոէլեկտրակայանում, էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2035 թվականի մայիսի 30-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2020 թվականի մայիսի 30-ը:

2. Հաստատել «ԷԼԻՏ ՀԻՂՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «ԷԼԻՏ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՆԱԽԱԳԱՀ**

**Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**



Հավելված  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային  
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը  
կարգավորող պետական հանձնաժողովի  
2018 թվականի հուլիսի 26-ի N 36-Ս որոշման

**«ԷԼԻՏ ՀԻՂԲՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության  
«ԷԼԻՏ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի  
(հզորության) արտադրության լիցենզիայի**

**Պայմանները**

(Լիցենզիա ԼԷ N 0008՝ տրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային  
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական  
հանձնաժողովի 2018 թվականի հուլիսի 26-ի N 36-Ս որոշմամբ)

**1. ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Սույն լիցենզիայում օգտագործված հասկացություններն են.

1) **Հանձնաժողով՝** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային  
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական  
հանձնաժողով.

2) **Լիցենզավորված անձ՝** «ԷԼԻՏ ՀԻՂԲՈ» սահմանափակ  
պատասխանատվությամբ ընկերություն.

3) **Լիցենզիա՝** Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն  
փաստաթուղթը, որը հավաստում է փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու և  
էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեություն  
իրականացնելու վերջինիս իրավունքն ու պարտականությունը.

4) **Շուկայի կանոններ՝** Հանձնաժողովի կողմից հաստատված հիմնարար  
փաստաթուղթ, որով կանոնակարգվում են էլեկտրաէներգետիկական համակարգում  
գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց փոխհարաբերությունները,  
համակարգի հուսալիության և անվտանգության հետ առնչվող հիմնական կանոններն  
ու ցուցանիշները, ինչպես նաև դրանց և շուկայի բնականոն աշխատանքի  
ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմները.

5) **Ֆորս-մաժոր՝** արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք  
ստեղծվել են Լիցենզավորված անձի կամ քիչ անկախ, ներառյալ (սակայն  
չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր  
ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները,  
պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ,  
պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ,  
գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությանը կամ  
հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման  
կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու,  
թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

**2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

2. Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 26-ից:

3. Լիցենզիան գործում է մինչև 2035 թվականի մայիսի 30-ը, որից՝

1) 2018 թվականի հուլիսի 26-ից մինչև 2020 թվականի մայիսի 30-ը կառուցման  
ժամանակահատվածն է,

2) մինչև 2035 թվականի մայիսի 30-ը՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածն է:

4. Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված ժամանակահատվածը (ժամկետը) երկարաձգելու անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում հայտ է ներկայացնում Հանձնաժողով:

**3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ**

5. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքը Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Նոր Խարխափուտ, Նոր Կարաչինար և Քնարավան համայնքների վարչական տարածքներն են:

**4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 10,034 մեգավատտ հաշվարկային հզորությամբ «ԷԼԻՏ» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:

**5. ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՑԱՆԻ ՏԵԽՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

7. Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

1) ջրառի և ջրահեռացման նիշերն են՝ 1829, 1681, 1682 մետր և 1436,5 մետր.

2) հաշվարկային ելք՝ Q<sub>Հ1=2</sub> խորանարդ մետր վայրկյանում, Q<sub>Հ2=2</sub> խորանարդ մետր վայրկյանում.

3) հաշվարկային ճնշում՝ H<sub>Հ1</sub>= 364,1 մետր, H<sub>Հ2</sub>= 230,9 մետր.

4) փոքր հիդրոէլեկտրակայանի հաշվարկային հզորություն՝ N<sub>1դր.</sub>=6139 կՎտ, N<sub>2դր.</sub>=3895 կՎտ:

8. Լիցենզիայի գործողության ընթացքում «ԷԼԻՏ» փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխության դեպքում Լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

9. «ԷԼԻՏ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտից հետո էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվելու է հետևյալ սարքավորումներով՝

1) գեներատորներ - 2 հատ,

2) հիդրոտուրբիններ - 2 հատ:

**6. ԼԻՑԵՆԶԻԱՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

10. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, Լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

11. Առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզիայով սահմանված որևէ իրավունք և պարտականություն

պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարելու, զիջելու կամ այլ կերպ փոխանցելու մեկ այլ անձի:

12. Լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

13. Լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

14. Լիցենզավորված անձը լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայտտեր դառնալու կամ լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ միավորվելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

15. Լիցենզավորված անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայտերը նույն կամ մեկ այլ լիցենզավորված անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս ձեռք բերելու կամ փայտմասնակցություն ունենալու, ինչպես նաև 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր վաճառելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

16. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու օրվանից 15 աշխատանքային օր առաջ Լիցենզավորված անձն այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

17. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի Լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:

18. Լիցենզավորված անձը պարտավոր է իրականացնել իր տնօրինության տակ գտնվող սարքավորումների շահագործումը, տեխնիկական սպասարկումը և նորոգումը՝ ապահովելով քաղաքացիների, սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:

19. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության ընթացքում օգտագործվող սարքավորումների համապատասխանությունը Արցախի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և Լիցենզիայում նախատեսված պայմաններին:

20. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, ինժեներական կառույցների, էներգատեղակայանքների և զծերի մատչելիությունը Հանձնաժողովի և օրենքով սահմանված այլ մարմինների ներկայացուցիչների համար:

21. Բացառությամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների եզրակացությունների (ակտերի), Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները (ակտերը)՝ եզրակացությունների (ակտերի) ստացման պահից 23 աշխատանքային օրվա ընթացքում:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից առաջադրված ծրագրով և ժամկետներում իրականացնել տեխնիկական աուդիտ՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված անկախ փորձագետների ներգրավմամբ: Աուդիտի հետ կապված ծախսերը կատարվում են Լիցենզավորված անձի կողմից:

23. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

24. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

25. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

26. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունները հրապարակային են, եթե դրանք Լիցենզավորված անձի կողմից չեն համարվում գաղտնի և նշված չեն որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցելու, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել ընկերության մրցակցային գործունեության շահերին: Հանձնաժողովն իրավասու է ընդունելու կամ մերժելու նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

27. Այն դեպքում, երբ Հանձնաժողովն ուսումնասիրում է Լիցենզավորված անձի կամ այլ անձանց կողմից ներկայացված որևէ հայտ, հարցադրում կամ դիմում-բողոք, մատուցում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հաղորդագրություն կամ տեղեկատվություն, Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի պահանջով, պարտավոր է ներկայացնել սպառիչ տեղեկատվություն:

28. Լիցենզավորված անձը պարտավոր է տասն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Հանձնաժողովի գրավոր հարցադրումներին, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետներ սահմանված չեն:

29. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան մինչև 2019 թվականի մարտի 31-ը, պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել «ԷԼԲՏ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման նախագիծը և նախահաշիվը, նախագծի տեխնիկական և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննությունները, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սահմանված՝ էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրաէներգիա արտադրող կայանների միանալու կարգի համաձայն ստացված՝ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միանալու տեխնիկական պայմանների պատճենը:

30. Լիցենզավորված անձը մինչև Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ժամկետի ավարտը պարտավոր է կատարել կարգաբերման-գործարկման աշխատանքներ՝ համաձայն Արցախի Հանրապետության օրենսդրության և առաքել էլեկտրական էներգիան էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա ունեցող անձին:

31. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև Լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հանձնաժողով ներկայացնել փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

32. Լիցենզավորված անձի կողմից առաքվող էլեկտրաէներգիայի (հզորության) վաճառքի սակագները սահմանում է Հանձնաժողովը: Սակագների սահմանումն ու վերանայումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

33. Լիցենզիայի 6-րդ կետում նշված հզորության մասնակի տեղադրման դեպքում Լիցենզավորված անձն իրավունք ունի Հանձնաժողով ներկայացնելու այդ մասով փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

34. Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց միջև կնքված էներգամատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի սահմանած պայմանագրերի օրինակելի ձևերին կամ պարտադիր

պայմաններին: Այդ պայմանագրերն ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

35. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

36. Լիցենզավորված անձը պարտավոր է կատարել Համակարգի օպերատորի օպերատիվ հրահանգները՝ ըստ Հանձնաժողովի կողմից հաստատված կարգի և նրանց հետ կնքված պայմանագրի դրույթների:

37. Լիցենզավորված անձը պարտավոր է աջակցել Համակարգի օպերատորի կողմից իրականացվող՝ էլեկտրական ցանցի հուսալիությունն ու անվտանգությունն ապահովող, Լիցենզավորված անձի սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների գնումներին, օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով ու պայմանագրերով սահմանված կարգով ապահովել այդ սարքերի շահագործումը, կատարել դրանց նորոգման, փոխարինման և այլ անհրաժեշտ աշխատանքներ, ինչպես նաև աջակցել իր տնօրինության տակ գտնվող այլ Անձանց սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների գնման իրականացմանը:

## **7. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ**

38. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

39. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:

40. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:

41. Հանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ներքին կանոնակարգը և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

## **8. ՏՈՒՑԱՆՔՆԵՐԸ**

42. Լիցենզավորված անձի կողմից «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, Լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքների հետևյալ տեսակները՝

1) նախազգուշացում.

2) «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված տուգանքներ.

3) Լիցենզիայի գործողության կասեցում.

4) Լիցենզիայի գործողության դադարեցում:

43. Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ:

44. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության՝ Լիցենզիայի 42-րդ կետի համաձայն, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս-մաժորի հետևանք են:

**9. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ**

45. Լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

46. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ Լիցենզիայի վերաձևակերպման համար:

Ի վկայություն սույնի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը սույն Լիցենզիան տրամադրել է՝

«ԷԼԻՏ ՀԻՎՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.

(ընկերության անվանումը)

Ա.Ն. Ստեփանակերտ, Սարոյան 8/12

(գտնվելու վայրը)

Գործունեության վայրը.

Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Նոր Խարխափուտ, Նոր Կարաչինար և Քնարավան համայնքների վարչական տարածքներն են:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՋՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» հուլիսի 2018 թվականի

N 37-Ս

ք. Ստեփանակերտ

«ՋՐՄՈՒՂ-ԿՈՑՈՒՂԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՑԼՏՎՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՍԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 45-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի ապրիլի 10-ի «Ջրային համակարգի օգտագործման թույլտվության տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 20Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ գլուխը և հաշվի առնելով «Ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հուլիսի 23-ի հայտը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2009 թվականի օգոստոսի 17-ի ««Ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը ջրային համակարգի օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» թիվ 52Ա որոշմամբ տրված N 0005 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2021 թվականի օգոստոսի 17-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

**Ա Ր Ց Ա Խ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն  
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«23» հունիսի 2018թ.

N 161-Ա

ք.Ստեփանակերտ

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՌԵՆԱ ՍՈՒՐԵՆԻ ԱՂԱՋԱՆՑԱՆԻՆ  
ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ  
ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության օրենքի 8-րդ, 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ  
բաժնի 2-րդ կետի պահանջներով.

**Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ**

1. Անհատ ձեռնարկատեր Ռենա Սուրենի Աղաջանյանին (հասցե՝  
Արցախի Հանրապետություն ք.Շուշի Ղազանչեցոց 53/1) հայտը բավարարել և  
տրամադրել դեղատնային գործունեություն (դեղատնային կրպակ)  
իրականացնելու համար լիցենզիա:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության  
աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.  
Հովհաննիսյանին՝

1) ապահովել տրված լիցենզիայի մասին տեղեկության գրանցումը  
համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը  
գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

**ԱՐՄՅԻԿ ԲԱՂԹԱՆ**



**Ա Ր Ց Ա Խ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն  
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«13» օգոստոսի 2018թ.

N 192-Ա

ք.Ստեփանակերտ

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՔՆԱՐԻԿ ԳԵՎՈՐԳԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ  
ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ  
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին  
մասի 7-րդ կետը և անհատ ձեռնարկատեր Քնարիկ Գևորգի Մարտիրոսյանի  
դիմումը

**Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ ԵՄ՝**

1. Ուժը կորցրած ճանաչել 2015 թվականի ապրիլի 13-ին ընտանեկան  
ստոմատոլոգիական գործունեության համար անհատ ձեռնարկատեր Քնարիկ  
Գևորգի Մարտիրոսյանին տրված թիվ Ա-XX-000280 լիցենզիան:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության  
աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ  
Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը  
համապատասխան գրանցամատյանում.

2) անհատ ձեռնարկատեր Քնարիկ Գևորգի Մարտիրոսյանի լիցենզիայի  
բնօրինակը կցել նրա անհատական գործին.

3) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը  
գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

**Ա. ԲԱՂՅԱՆ**

**Ա Ր Ց Ա Խ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն  
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«13» օգոստոսի 2018թ.

N 193-Ա

ք.Ստեփանակերտ

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՄԱՆ ՎԼԱՊԻՄԻՐԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ  
ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և անհատ ձեռնարկատեր Արման Վլադիմիրի Մկրտչյանի դիմումը

**Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ ԵՄ՝**

1. Ուժը կորցրած ճանաչել 2009 թվականի սեպտեմբերի 8-ին «Լազերային բժշկություն և դոպլերոգրաֆիա» գործունեության համար անհատ ձեռնարկատեր Արման Վլադիմիրի Մկրտչյանին տրված թիվ Ա-XX-000105 լիցենզիան:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) անհատ ձեռնարկատեր Արման Վլադիմիրի Մկրտչյանի լիցենզիայի բնօրինակը կցել նրա անհատական գործին.

3) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

**Ա. ԲԱՂՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«13» օգոստոսի 2018թ.

N 194-Ա

ք.Ստեփանակերտ

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀՈՎԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ  
ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և անհատ ձեռնարկատեր Հովիկ Գրիգորյանի դիմումը

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ`**

1. Ուժը կորցրած ճանաչել 2007 թվականի դեկտեմբերի 7-ին ընդհանուր ստոմատոլոգիա գործունեության համար անհատ ձեռնարկատեր Հովիկ Գրիգորյանին տրված թիվ Ա-XX-000038 լիցենզիան:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին`

1) ապահովել լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) Անհատ ձեռնարկատեր Հովիկ Գրիգորյանի լիցենզիայի բնօրինակը կցել նրա անհատական գործին.

3) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

**Ա.ԲԱՂՅԱՆ**

**Ա Ր Ց Ա Խ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն  
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«13» օգոստոսի 2018թ.

N 195-Ա

ք.Ստեփանակերտ

**«ԴԵՆՏ» ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ  
ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊՐԱԿՏԻԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի, 43-րդ հոդվածի 2-րդ մասի  
աղյուսակի 3-րդ բաժնի 3-րդ կետի պահանջներով.

**Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ**

1. «ԴԵՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության  
(հասցե՝ Արցախի Հանրապետություն քաղաք Ստեփանակերտ Դավիթ Բեկի  
11/3) հայտը բավարարել և տալ ստոմատոլոգիական ընդհանուր պրակտիկա  
գործունեություն իրականացնելու համար լիցենզիա:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության  
աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ  
Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել տրված լիցենզիայի մասին տեղեկության գրանցումը  
համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը  
գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

**Ա.ԲԱՂԲԱՆ**

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՈՒԼԻՄ ԱՍՍՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ, ԴԱԴԱՐԵՑՎԱԾ ԵՎ ԿԱՍԵՑՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

03.08.2018թ.

h/h	Լիցենզավորված անձի անվանումը կամ անունը, ազգանունը	Լիցենզիայի		Գործունեության		Լիցենզիայի գործողության ժամկետը	Ծանոթություն
		համարը	տրման ամսաթիվը	տեսակը	իրականացման վայրը		
<b>ՏՐԱՄԱԴՐՈՒՄ</b>							
1	ԱԶ Ռոբերտ Դադայան	ՏՕՆ00654	16.07.2018	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	
2	ԱԶ Կարեն Հարությունյան	ՏՕՆ00655	16.07.2018		ԱՀ	անժամկետ	
3	Հարութ Ալեքսանդրի Հայրապետյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00656	16.07.2018		ԱՀ	անժամկետ	
4	ԱԶ Էդուարդ Չերքեզի Հախումյան	ՏՕՆ00657	16.07.2018		ԱՀ	անժամկետ	
5	Մհեր Վաչագանի Գաբրիելյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00658	16.07.2018		ԱՀ	անժամկետ	
6	Արսեն Արթուրի Զաքարյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00659	16.07.2018		ԱՀ	անժամկետ	
7	Ներսես Ալեքսեյի Պետրոսյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00660	16.07.2018		ԱՀ	անժամկետ	
8	Էդիկ Դավիթի Սարգսյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00661	26.07.2018		ԱՀ	անժամկետ	
9	Վալերի Սերգեյի Ղուկասյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00662	26.07.2018		ԱՀ	անժամկետ	
10	Սլավիկ Բաշիրի Սեյինյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00663	26.07.2018		ԱՀ	անժամկետ	
<b>ԴԱԴԱՐԵՑՈՒՄ</b>							
1	ԱԶ Ռուդիկ Գասպարյան	ՏՕՆ00255	19.12.2012	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	դադարեցվել է՝ 16.07.2018
2	Էրիկ Շարոյի Ոսկանյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00635	20.04.2018		ԱՀ	անժամկետ	
3	Վրեժ Զոհրաբի Բաբայան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00592	25.01.2018		ԱՀ	անժամկետ	
4	Ռուդոլֆ Վազիֆի Չալյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00594	25.01.2018		ԱՀ	անժամկետ	
5	ԱԶ Կարեն Չալյան	ՏՕՆ00312	16.07.2013		ԱՀ	անժամկետ	դադարեցվել է՝ 26.07.2018
6	Ռուբեն Զաքարյան Ռուբենի (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00503	09.08.2016		ԱՀ	անժամկետ	
7	ԱԶ Սևակ Ստեփանի Սարգսյան	ՏՕՆ00573	14.08.2017		ԱՀ	անժամկետ	
<b>ԿԱՍԵՑՈՒՄ</b>							
1	Անդրեյ Արտյոմի Հայրապետյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00522	19.12.2016	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով	ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է՝ 17.07.2018

2	ԱԶ Դավիթ Կարախանյան	ՏՃՆ00493	31.03.2016	ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 05.07.2018
3	ԱԶ Ավանես Համբարձումով	ՏՃՆ00033	29.04.2018		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 28.07.2018
4	Կարեն Սերգեյի Սևումյան (Ֆիզիկական անձ)	ՏՃՆ00548	25.04.2018		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 05.07.2018
5	ԱԶ Դավիթ Սարգսյան	ՏՃՆ00397	21.07.2014	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	կասեցվել է 21.07.2018
6	Ադամյան Գարի Վալերիի (Ֆիզիկական անձ)	ՏՃՆ00568	14.07.2017		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 14.07.2018
7	Վիտալի Ալբերտի Բեկլարյան (Ֆիզիկական անձ)	ՏՃՆ00570	26.07.2017		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 26.07.2018

**Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր**  
**2018 թվականի հունիս ամսվա համար**

**ԱՀ քաղաքաշինության նախարարություն**

NN	Ֆիզիկական անձանց /անուն, ազգանուն/, բնակության վայրը իրավաբանական անձանց /անվանումը/, գտնվելու վայրը	ՀՎՀՀ	Լիցենզ. համար	Լիցենզ. տալու ամսաթ.	Գործողության տեսակը	Գործուն. իրական. վայրը	Գործող. ժամկետը	Պետական տուրքի առաջին վճարման ամսաթիվը	Ծանոթ.
1	«ՌԻ-ՄԱ» ՍՊԸ ք Ստեփ., Շիրվանզադե 53	9004203 8	ՇԻ-1034	14.06.2018	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	12.06.2018	
2	«ԱԳՐԻԱՐՏ» ՍՊԸ ք Ստեփ., Կամո 2 նրբ., շենք 1/26	9003983 3	ՇԻ-1035	22.06.2018	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	19.06.2018	
3			ՔՓՄ-1036	22.06.2018	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ		
4	«ԱՄԿԵՐԱՆ ՎԱՅՆ» ՍՊԸ ք Ասկերան, Շահումյան փող 41ա	9007390 7	ՇԻ-1037	22.06.2018	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	21.06.2018	
5	«ԱԿՎԵՂՈՒԿ» ՍՊԸ ք Ստեփ., Վ. Սարոյան, շենք 8/41	9004205 4	ՔՓՄ-1038	28.06.2018	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	27.06.2018	

**Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր**  
**2018 թվականի հունիս ամսվա համար**

**ԱՀ քաղաքաշինության նախարարություն**

N N	Լիցենզավորված, թույլտվություն, արտոնագիր ունեցող անձի		Լիցենզիայի սերիան և համարը	Լիցենզավորված գործունեության տեսակը	Լիցենզիայի վերաձևակերպում		Լիցենզիայի գործունեության ժամկետի երկարաձգում (նշել երկարաձգված ժամանակահատվածի ավարտման ամսաթիվը)	Լիցենզիայի, թույլտվության արտոնագրի գործողության կասեցում		Լիցենզիայի գործունեության դադարեցման կամ Լիցենզիայի գործունեության լուրջ խախտումների համարվելու ամսաթիվը
	Անվանումը	ՀՎՀՀ			Որոշման ամսաթիվը	Նոր անվանումը		կասեցման մասին որոշման կամ դեպքի ամսաթիվը	կասեցումը հանելու մասին որոշման ամսաթիվը	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.
1	«ԱՐԽԻՏՐԱՎ» ՓԲԸ ք. Ստեփ. փող. Թումանյան 1	90021357	ՔՓՄ-300	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում ըստ հետևյալ ոլորտի <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				24.06.2018		
2	«ՊՐՈՖԻԼ» ՍՊԸ ք. Ստեփ. Նաբերեժնայա թիվ 2	90022807	ՔՓՄ-395	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				19.06.2018		
3			ՔՓՄ-396	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի <i>տրանսպորտային</i>						
4			ՔՓՄ-397	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի <i>հիդրոտեխնիկական</i>						



5	«ՆԱՐԵԿ» ՍՊԸ ք. Ստեփ. Բաղրամյան 3/31	90012623	ՇԻ-734	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>				23.06.2018		
6	«ՖՈՐ ԴԻՐԵԿՇՆՍ» ՍՊԸ ք. Ստեփ., փող. Սասունցի Դավիթ 15	90023576	ՇԻ-823	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>				15.06.2018		
7	«ԷՆԵՐԳՈՍՈՆՏԱՇ» ՍՊԸ ք. Ստեփ. Դուդինի փողոց, տուն 18	90028252	ՔՓՄ-938	Քաղաքաշինության փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				03.06.2018		
8	«ՍՏՐՈՅՄՈՆՏԱՇ» ՍՊԸ ք. Ստեփ., Դավիթ Բեկի փող. շենք 3 բն. 1	90033896	ՇԻ-980	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>				02.06.2018		
9	«Մ-ԲԻԼԴ» ՍՊԸ ք. Ստեփ, Ս. Դավիթ փող. շ. 60, բն. 37	90040179	ՇԻ-981	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				30.06.2018		
10	«ՀՈՎԻԿ ՄԱՅԻՆՍԱՆ» ԱԶ ք. Ստեփ., Գր. Լուսավորիչ փող., տուն 81	90472996	ՔՓՄ-982	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				30.06.2018		
11	«ՄՕՆ» ՍՊԸ ք. Ստեփ, Հեթիմյան փող, շ 2գ, բն 17	90040205	ՇԻ-983	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				30.06.2018		
12	«Գ Ա Ն Չ» ՍՊԸ ք. Մարտակերտ, Թումանյանի 24	90144158	ՔՓՄ-612	Քաղաքաշինության փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>					24.05.2018	

**Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր**  
**2018 թվականի հուլիս ամսվա համար**

**ԱՀ քաղաքաշինության նախարարություն**

NN	Ֆիզիկական անձանց /անուն, ազգանուն/, բնակության վայրը իրավաբանական անձանց /անվանումը/, գտնվելու վայրը	ՀՎՀՀ	Լիցենզ. համար	Լիցենզ. տալու ամսաթ.	Գործողության տեսակը	Գործուն. իրական. վայրը	Գործող. ժամկետը	Պետական տուրքի առաջին վճարման ամսաթիվը	Ծանոթ.
1	«Մ-ԳՐՈՒՊ ԷՆԵՐԳՈՍԵՐՎԻՍ» ՍՊԸ ք. Ստեփ. Ադմ. Իսակով շենք 5/1	9003958 3	ՈՏՀ-1039	13.07.2018	Որակի տեխնիկական հսկողություն, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	21.06.2018	
2			ՈՏՀ-1040		Որակի տեխնիկական հսկողություն, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	21.06.2018	
3			ՈՏՀ-1041		Որակի տեխնիկական հսկողություն, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	21.06.2018	
4	«ԱԿՎԱՄԻՍԵՍ» ՍՊԸ ք. Ստեփ., Ազատամարտիկների 20/12	9004237 1	ՇԻ-1042	13.07.2018	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	11.07.2018	
5	«ԱՐՑԱԽԷՆԵՐԳՈ» ՓԲԸ ք. Ստեփ., Սասունցի Դավիթ փող., շենք 64	9000018 6	ՇԻ-1043	20.07.2018	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	13.07.2018	
6	«ՎԻՄՇԻՆ» ՍՊԸ ք. Ստեփ., Բեկզառյանի նրբ. տուն 17	9004233 9	ՈՏՀ-1044	20.07.2018	Որակի տեխնիկական հսկողություն, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	18.07.2018	

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր  
2018 թվականի հուլիս ամսվա համար

ԱՀ քաղաքաշինության նախարարություն

NN	Լիցենզավորված, թույլտվություն, արտոնագիր ունեցող անձի		Լիցենզիայի սերիան և համարը	Լիցենզավորված գործունեության տեսակը	Լիցենզիայի վերաձևակերպում		Լիցենզիայի գործունեության ժամկետի երկարացում (եթե երկարացված ժամանակահատվածի ավարտումն անստանդարտ)	Լիցենզիայի, թույլտվության արտոնագրի գործողության կասեցում		Միվճարում, մյուսը՝ Լիցենզիայի գործունեության թույլտվությունը կամ թույլտվությունը վերականգնելու արտոնագրի գործունեության
	Անվանումը	ՀՎՀՀ			Միվճարման ամսաթիվը	Նոր անվանումով		կասեցման մասին որոշման կամ դեպքի ամսաթիվը	կասեցումը հանելու մասին որոշման ամսաթիվը	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.
1	«ԽԱԶԵՆ» ՓԲԸ ք. Ստեփ. Ա. Առաքելյանի 1	90003261	ՇԻ-402	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				05.07.2018		
2	«Գ Ա Ն Չ» ՍՊԸ ք. Մարտակերտ, Թումանյանի 24	90144158	ՔՓՄ-612	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				01.07.2018		
3	«ԿԱԳԻԼԱՐ» ՍՊԸ Շահումյանի շրջան, գյուղ Ականաբերդ	90028228	ՇԻ-794	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				13.07.2018		
4	«Նիվա» ՍՊԸ Քաշաթաղի շրջ., ք.Բերձոր, V թաղ. տ.63	10000482	ՇԻ-796	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>				13.07.2018		
5	«ԳՈԼԴԼԱՅԹ» ՍՊԸ ք.Ստեփ. Ս.Դավիթ 56/42	90013807	ՇԻ-827	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				31.07.2018		
6	«ԱՎՅՈՒՆ» ՍՊԸ ք. Ստեփ. Գ. Նժդեհ, տուն 24	90038745	ՇԻ-941	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի</i>				29.07.2018		

				<i>հասարակական և արտադրական</i>						
7	«ԿԱՊԻՏԱԼ ՍՏՐՈՅ» ՍՊԸ ք. Ստեփ. Վ. Սարոյան 43/1	90038753	ՇԻ-942	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				29.07.2018		
8	«ՎԵՍՏ» ՍՊԸ ք. Ստեփ., Ա. Մկրտչյան փող., շ. 14բ/4	90021176	ՇԻ-985	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				07.07.2018		
9	«ԴՈՐՈՒԹ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ ք. Հաղրույ, Փետրվարի 20 փող. շ. 13/2	90283435	ՔՓՄ-987	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				21.07.2018		
10	«ԷՆԵՐԳՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ ք. Ստեփ. Վ. Սարոյանի 29 <sup>ա</sup> շենք, բն.1	90034691	ՔՓՄ-856	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				28.02.2016		
11	«ՊԻՐԱՄԻԴԱ» ՍՊԸ ք. Ստեփ. 1-ին Նագորնայա 2	90021418	ՇԻ-579	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				29.12.2017		
12	«Արմեն-88» ՍՊԸ ԼՂՀ, ք. Ասկերան, Կոմունյանց 19	90073159	ՇԻ-978	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				26.05.2018		
13	«ԳՈԼԴ ԼԱՅԹ» ՍՊԸ ք. Ստեփ. Ս. Դավիթ 56/42	90013807	ՇԻ-110	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				30.12.2014		
14			ՇԻ-827	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				31.07.2015		
15	«Ճանշին վերանորոգում» ՓԲԸ ք. Ստեփ., Բերքաձորի տեղամաս	90013187	ՇԻ-243	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>					13.07.2018 (դիմում առ 10.07.2018)	
16	«ԳԱՐԴԵՆ» ՍՊԸ ք. Ստեփ., Գ. Նժդեհ 67ա	90036707	ՇԻ-986	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>					20.07.2018 (դիմում առ 16.07.2018)	

**Ց Ո Ւ Ց Ա Կ**

**ԱՀ ֆինանսների նախարարության կողմից տրված լիցենզիաների**

ՀՀ	Լիցենզավորված, թույլտվություն, արտոնագիր ունեցող անձի		Լիցենզիայի, թույլտվության, արտոնագրի			
	անվանումը	ՀՎՀՀ	սերիան	համարը	գործունեության տեսակը	տրամադրման ամսաթիվը
1	«ԳՈՐՆԱՅԱ» ՍՊԸ	90039961	ՊԼ	0367	«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների արտադրություն	16.07.2018

**Ց Ո Ւ Ց Ա Կ**

**ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 36-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն կասեցված լիցենզիաների**

ՀՀ	Լիցենզավորված, թույլտվություն, արտոնագիր ունեցող անձի		Լիցենզիայի, թույլտվության, արտոնագրի			
	անվանումը	ՀՎՀՀ	սերիան	համարը	գործունեության տեսակը	կասեցման ամսաթիվը
	«Միկա-Հադրույթ» ՓԲԸ	90281869	ՊԼ	0065	Գինու, ինձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրություն	21.06.2018
	«ՍՏԵՓԱՆԱ-ԿԵՐՏԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ	90022272	ՊԼ	0334	Թորած ալկոհոլային խմիչքների (բացառությամբ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող, մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների, ինչպես նաև 2208 ծածկագրին դասվող միայն պտուղներից և հատապտուղներից թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների) և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրություն	22.06.2018
	«ՏՐԻՈՒՄՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	90035145	ՊԼ	0362	Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին	26.06.2018

					դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ակոհոլային խմիչքների արտադրություն	
	«ԿԱՐԱՏ» ՓԲԸ	90038263	ՊԼ	0363	Գինու, խնձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրություն	26.06.2018